

---

«ՄԱՌԱ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐ» ՍՊԸ

**<<ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ>> ՊՓԲԸ-Ի ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ  
ՆԱԽԱԳԻԾ**

**Վաղարշապատի բժշկական կենտրոնի վերակառուցման  
աշխատանքների**

**Շրջակա միջավայրի վրա ազդեցության**

**նախնական գնահատման հայտ**

«ՄԱՌԱ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐ»  
ՍՊԸ տնօրեն

Մ. Հուսնյան

2020

---

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումներ .....	<b>Error! Bookmark not defined.</b>
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	4
1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	5
2 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ .....	5
2.1 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակը .....	5
2.2 Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի հաշվետվության կազմը 6	
2.3 Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մեթոդաբանությունը .....	6
3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ .....	7
4 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ .....	9
4.1 Նախագծային և տեխնոլոգիական լուծումները .....	10
4.2 Ջրամատակարարում և ջրահեռացում .....	21
4.3 Ջեռուցում .....	<b>Error! Bookmark not defined.</b>
4.4 Շինարարական աշխատանքների կազմակերպում .....	22
5 ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲԱՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ .....	26
5.1 Տեղանքի ռելիեֆը և երկրաբանությունը .....	<b>Error! Bookmark not defined.</b>
5.2 Սեյսմիկ բնութագրերը .....	27
5.3 Կլիմայական պայմանների հակիրճ նկարագրությունը .....	28
5.4 Բնապահպանական հատուկ տարածքներ և պատմամշակութային հուշարձաններ .....	28
5.5 Օդային ավազան .....	29
5.6 Հողային ռեսուրսները և հողօգտագործումը .....	30
5.7 Ջրային ռեսուրսներ .....	31

5.8	Բուսական աշխարհ.....	31
6	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՄՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ .....	33
6.1	Շինարարության փուլ.....	33
6.2	Շահագործման փուլ.....	40
7.	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ .....	41
7.1	Բնապահպանական ազդեցությունները մեղմացնող միջոցառումները .....	41
7.2	Մոնիտորինգ.....	43
	<u>Հավելված 1 . Բնապահպանական մեղմացնող միջոցառումների պլան</u> .....	
	<b>Հավելված 2. Բնապահպանական մեղմացնող միջոցառումների մոնիտորինգի պլան</b>	
	ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ.....	55
9.	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	56

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ծրագիրը	<<Վաղարշապատի բժշկական կենտրոն>> ՊՓԲԸ Վաղարշապատի բժշկական կենտրոնի վերակառուցում
Ծրագրի նպատակը	Բժշկական կենտրոնի մասնաշենքերի սեյսմազինության բարձրացում և վերակառուցում, հիվանդանոցային պայմանների բարելավում և օպտիմալացում
Ծրագրի պատվիրատու, կառուցապատող	ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Փորձաքննական գործընթացի ձեռնարկող	«ՄԱՌԱ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐ» ՍՊԸ
Նախագծային ծառայություններ	«ՄԱՌԱ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐ» ՍՊԸ
Ձեռնարկողի հասցե	ՀՀ ք, Երևան Վրացական փողոց 17 հասցե
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ	Էլ. փոստ՝ <a href="mailto:mgusnyan@mail.ru">mgusnyan@mail.ru</a> Հեռ.՝ (+374 93) 740411
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	ՀՀ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Սպանդարյան փողոց թիվ 1 հասցե
Հողամասի մակերեսը	1.558 հա /15580 քմ/
Կառուցապատման մակերեսը	Հիվանդանոցի գոյություն ունեցող և վերակառուցվող շենքերի զբաղեցրած մակերեսը՝ 11588.7ք.մ

## 1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզի Վաղարշապատի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների հիմք են ծառայել ՀՀ կառավարության 27.06.2019 թվականի «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեում և ՀՀ կառավարության 2018թ. դեկտեմբերի 27-ի թիվ 1515-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» թիվ 783-Ն որոշումը:

Բժշկական կենտրոնի վերակառուցման նախագծային աշխատանքների պատվիրատու և կառուցապատող է հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ Պատվիրատու) պատվեր՝ թիվ ՀՀՔԿ-ԳՀԱՇԶԲ-19/4: Նախագծային աշխատանքներն իրականացվում են «ՄԱՌԱ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐ» ՍՊԸ-ի կողմից՝ Պատվիրատուի կողմից ներկայացված նախագծային աշխատանքների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի և ՀՀ գործող նորմատիվային պահանջների համաձայն:

Համաձայն ՀՀ-ի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի Հոդված 14, կետ 6-ի, 1500 ք.մ բարձր կառուցապատման մակերես ունեցող քաղաքաշինության ոլորտի նախագծերը դասվում են «Գ» կատեգորիայի և պահանջում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից գործունեության բնապահպանական պետական փորձաքննության իրականացում: Վաղարշապատի բժշկական կենտրոնի կառուցապատման ենթակա տարածքի մակերեսը գնահատվում է 11588.7, ուստի բժշկական կենտրոնի նախագիծը և նախատեսվող գործունեությունը պահանջում է շրջակա միջավայրի վրա ազդեցությունների նախնական գնահատման հայտի (ՆԳՀ) պատրաստում և ներկայացում բնապահպանական պետական փորձաքննության և փորձագիտական եզրակացության ձեռք բերում:

## 2 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### 2.1 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար

նյութերը, թափոնները և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել այն և ցույց տալ, որ նախատեսված են դրա կանխարգելմանը, չեզոքացմանը և/կամ նվազեցմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումներ: Գնահատման նպատակն է նաև նույնականացնել հնարավոր սոցիալական ազդեցությունները և օգուտները, նախատեսել գործունեության դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման միջոցառումները:

## **2.2 Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի հաշվետվության կազմը**

ՇՄԱԳ հաշվետվության մեջ գնահատման ենթակա օբյեկտները և բնութագրերը սահմանված են "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 13 կետերում:

## **2.3 Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մեթոդաբանությունը**

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ՆԳՀ-ի մշակումն իրականացվել է ազգային օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին, ինչպես նաև ԱԶԲ-ի և ՀԲ բնապահպանական ուղեցույցների և ձեռնարկների դրույթներին համապատասխան: Նախնական գնահատման հայտում օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- նախագծվող բժշկական կենտրոնի աշխատանքային նախագիծը
- նախատեսվող գործունեության տեղանք կատարած այցելությունների ընթացքում հավաքագրված տվյալները և տեղեկատվությունը
- տարածաշրջանի վերաբերյալ հաշվետվությունները, վերլուծությունները, քարտեզները
- ՀՀ օրենսդրության բնապահպանական և օրնսդրական կարգավորիչ շրջանակը
- շահագրգիռ կողմերի հետ քննարկումները

### **3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ**

Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրենսդրական և կարգավորիչ շրջանակն ընդգրկում է ավելի քան 30 բնապահպանական օրենքներ: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերն ներկայացված են ստորև.

**ՀՀ Սահմանադրություն (2015).** 10-րդ հոդվածը սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ, բնական պաշարների բնական օգտագործման վերաբերյալ, ինչպես նաև հոդված 8ի համաձայն Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին:

**ՀՀ Օրենքը Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (2014)** (Հոդված 14, կետ 6, հոդված 16) պահանջում է իրականացնել ծրագրերի բնապահպանական գնահատում, գնությունն ու ըստ կատեգորիաների դասակարգում կախված գործունեության ձևից, ինչպես նաև ենթարկել պետական փորձաքննության և ստանալ փորձագիտական եզրակացություն:

**ՀՀ Օրենքը Թափոնների մասին (2004)** կարգավորում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքագրումը, տեղափոխումը, պահեստավորումը, վերամշակումը և տեղադրումը ՀՀ-ում:

**ՀՀ Օրենքը Բնապահպանական Վերահսկողության մասին (2005)** կարգավորում է ՀՀ-ում պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ:

**ՀՀ Օրենքը Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին (2000)** կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման արարողակարգերը:

**ՀՀ Օրենքը Քաղաքաշինության մասին (1998)**(Հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6) կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը: Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն

ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

**ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N11- Ն** «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում Շինարարական նորմերը հաստատելու մասին» (14 հունվար 2008) (Գլուխ IX):

**ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N 44** Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ (28 ապրիլի 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

**ՀՀ Կառավարության որոշում N 121-Ն** Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003) պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

#### **Ուղեցույցներ և ստանդարտներ**

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013), որը պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

**Բնապահպանական որակի ստանդարտներ**, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

Բնապահպանության նախարարության Վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության բաժնի կողմից մշակված «Շինարարական աղբի կառավարման» ուղեցույցները:



#### 4.ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Վաղարշապատի բժշկական կենտրոնը նախատեսվում է կառուցել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ /Էջմիածին/ համայնքի Սպանդարյան փողոց թիվ 1 հասցեում գործող «Վաղարշապատի բժշկական կենտրոն» ՊՓԲԸ-ի տարածքում: Դիտարկվող տարածքը գտնվում է Էջմիածին քաղաքի հյուսիսային մասում, Արմավիր-Երևան մայրուղուց 560մ հեռավորությունների վրա: Մակերեսն ունի ոչ մեծ թեքություններ՝ հյուսիսից հարավ և արևելքից-արևմուտք: Հիվանդանոցի տարածքի հարթակի ռելիեֆը հարթ է, տեղաբաշխված է 874.5-875.5մ նիշերի սահմաններում: Հողամասը գտնվում է բնակավայրերի հասարակական կառուցապատման գոտում, զբաղեցնում է 1.558 հա տարածք: Հողամասը ներկա վիճակում ամբողջությամբ Վաղարշապատի հիվանդանոցային համալիրն է:

Բժշկական կենտրոնի վերակառուցման նախագծային աշխատանքների պատվիրատու և կառուցապատող է հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեն: Նախագծային աշխատանքներն իրականացվում են «ՄԱՌԱ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐ» ՍՊԸ-ի կողմից՝ Պատվիրատուի կողմից ներկայացված նախագծային աշխատանքների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի, ՀՀ գործող նորմատիվային պահանջների և ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքային համայնքի կողմից 30.12.2019թ. տրված թիվ 227 նախագծման թույլտվության համաձայն:

Բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների շրջանակներում նախագծված ինժեներական ցանցերը միանալու են գոյություն ունեցող ցանցերին: Տարածքում գոյություն ունեցող կանաչապատ մակերեսները և ծառերը չեն ենթարկվի շինարարական աշխատանքների ազդեցության, քանի որ վերակառուցումը հողային աշխատանքներ չի ներառում: Վերակառուցման աշխատանքների համար օգտագործվելու են գոյություն ունեցող, կառուցապատված տարածքները, քանդելով այդ տարածքներում առկա շինությունները:

Նկ. 1 Վաղարշապատի բժշկական կենտրոնի տեղադիրքը Վաղարշապատ համայնքում:

Աղբյուրը: google earth data 2020.Նկար2



## 5. ՆԱԽԱԳԾԱՅԻՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

Վաղարշապատի բժշկական կենտրոնի վերակառուցման նախագծման աշխատանքներն իրականացվել են ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից մշակված տեխնիկական առաջադրանքի և Էջմիածին համայնքի ղեկավարի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի փաստաթղթերի համաձայն:

Գործող Վաղարշապատի բժշկական կենտրոնի համալիրը ներառում է՝ հիվանդանոցի հիմնական մասնաշենքը, ծննդատունը, պոլիկլինիկական, դիախերձարանը,

թափոնների հավաքման սենյակը, թթվածնային կայանը և այլն: Համալիրի օժանդակ կառույցներից են՝ կաթսայատունը, տրանսֆորմատորային ենթակայանը պահակատունը և այլն:

Ներկայացվող գործունեության ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները:

- ԲԿ-ի նոր հիվանդանոցային մասնաշենքի (1) կառուցում,
- Հիվանդանոցի գոյություն ունեցող մասնաշենքի վերակառուցում (2)
- Վարչական մասնաշենքի (2) կառուցում /որը բաղկացած է օժանդակ սենքերից՝ լվացքատուն, կենտրոնական ախտահանման բաժանմունք, հիվանդանոցային դեղատուն, ադմինիստրացիա, պահեստ/
- Գոյություն ունեցող կաթսայատան (9),
- տարածքի ազատ գոտիների բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:


Նոր կառուցվող մասնաշենքերը կառուցվելու են գոյություն ունեցող շենքերի տարածքներում, քանդելով դրանք:

Վաղարշապատի ԲԿ-ի վերակառուցման աշխատանքների հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.


- <<Վաղարշապատի հիվանդանոց>> ՊՓԲԸ-ի հողամասի ընդհանուր մակերես՝ 15580 քմ
- Հիվանդանոցային համալիրի ընդհանուր կառուցապատման մակերես՝ 11588.7քմ /ներառյալ՝ գոյություն ունեցող և վերակառուցվող շենքեր/
- Կանաչապատում՝ 2217. քմ
- Ճանապարհներ, բազալտե եզրաքարեր, ասֆալտ, ավտոկանգառներ՝ 1775 քմ:

Տարածքում գոյություն ունեցող կանաչապատ տարածքների մակերեսը կազմում է 2104.9 քմ: Վերակառուցման նախագծի շրջանակներում նոր կանաչապատ տարածքների ընդհանուր մակերեսը կդառնա 2217.9 քմ: Կանաչապատման աշխատանքների շրջանակում նախատեսվում է 113 քմ մակերեսով տարածքում սիզամարգերի իրականացում, որտեղ կցանվեն նաև ծաղիկներ:

<<Վաղարշապատի հիվանդանոց>> ՊՓԲԸ ԲԿ-ի գլխավոր հատակագիծ



**Հողամասի բարեկարգման և կանաչապատման հատակագիծ**



«Վաղարշապատ հիվանդանոց» ՊՓԲԸ-ի վերակառուցման նախագիծը ներառում է

- Վերակառուցվող մասնաշենք
- Նոր հիվանդանոցային մասնաշենք
- Վարչատնտեսական մասնաշենք, որտեղ նախատեսված է լվացքատուն, կենտրոնական ախտահանման բաժանմունք, հիվանդանոցային դեղատուն, աղմինիստրացիա և այլն:

Վերակառուցվող և նոր կառուցվող մասնաշենքերի առաջին հարկում տեղադրված է հիվանդանոցային ընդունարանը, որտեղ նախատեսված են հետազոտման սենյակ,

**գիպսային վիրակապարան:** Նույն հարկում նաղատեսված է նաև մեկ տեղանոց **անհետաձգելի բուժօգնության սրահ**, որը համալրված է ֆունկցիոնալ մահճակալով, թոքերի արհեստական օդափոխության և այլ անհրաժեշտ սարքավորումներով:

Առաջին հարկում նախատեսված է նաև **ախտորոշիչ բաժանմունք**, որը սպասարկում է դրսի և ստացիոնար հիվանդներին: Բաժանմունքի կազմի մեջ նախատեսված են ուլտրաձայնային հետազոտության և էնդոսկոպիայի սենյակներ, ռենտգենդիագնոստիկայի կաբինետ: Նույն հարկում մախատեսված են նաև **կլինիկական, բիոքիմիական և բակտերիոլոգիական լաբորատորիաներ** /լվացման սենյակներով/, **ինֆեկցիոն բաժանմունք**, որը մեկուսացված է բոլոր ստորաբաժանումներից:

Առաջին հարկում տեղադրված է նաև **շտապօգնության կայանը**, որը ծառայում է բնակչությանը հրատապ օգնություն ցուցաբերելու համար:

Երկրորդ հարկում տեղակայված են **մեծահասակների թերապիայի բաժանմունքը**, որը համալրված է 16 հատ՝ 2տեղանոց և 5 հատ՝ 1տեղանոց հիվանդասենյակներով և **ինտենսիվ թերապիայի բաժանմունքը՝** 2հատ՝ 3 տեղանոց ինտենսիվ բուժման սրահով: Բաժանմունքները համալրված են անհրաժեշտ աշխատասենյակներով, որտեղ նախատեսված են համապատասխան սարքավորումներ և կահույք:

Երրորդ հարկում նախատեսված է **վիրահատական բլոկ**, որը մեկուսացված է բոլոր հիվանդանոցային ստորաբաժանումներից և կազմված է 3 վիրասրահից: Աշխատողների մուտքը կատարվում է անցման գոտու միջոցով: Նույն բլոկում նախատեսված է 2 հատ՝ 3 տեղանոց հետովիրահատական ինտենսիվ բուժման հիվանդասենյակներ: Վիրահատական բլոկի ստորաբաժանումները գոտիավորված են և ապահովում են հարմարավետ կապ վերակենդանացման սենյակների, հիվանդասենյակների և այլ սենյակների միջև:

Նույն հարկում տեղակայված է **մանկական թերապիայի բաժանմունք** 11 հատ՝ 2 տեղանոց հիվանդասենյակներով: Վիրաբուժական բաժանմունքում նախատեսված են 8 հատ՝ 2 տեղանոց և 2 հատ՝ 1տեղանոց հիվանդասենյակներ և 1 տեղանոց հիվանդասենյակ՝ հաշմանդամների համար:

Վարչատնտեսական մասնաշենքի առաջին հարկում նախատեսված են **լվացքատունը, կենտրոնական ախտահանման բաժանմունքը**, որի ստերիլ պարագաների (կյութերը) առաքումը նախատեսված է առաջին հերթին վիրահատական բլոկի համար: Նույն հարկում գտնվում են **հիվանդանոցային դեղատան** պահեստները և ինժեներական ենթակառուցվածքների տեղակայման սենյակները:

Երկրորդ հարկում նախատեսված է ադմինիստրացիայի աշխատասենյակները:

*Վերակառուցվող հիմնական մասնաշենքը* եռահարկ է, ունի նկուղային հարկ: Մասնաշենքի կրող պատերը քարե են, տանիքը լանջավոր, փայտե կմախքով և թիթեղե

ծածկով: Ներկայացվող գործունեության վերակառուցման աշխատանքների շրջանակում նախատեսվում է պահպանել հիմնական մասնաշենքի արտաքին պատերը և ծածկերը: Ըստ նախագծի կիրականացվի շենքի միջնորմերի, տանիքի, հատակների, պատուհանների, ներքին և արտաքին դռների, ներքին ինժեներական ցանցերի ապամոնտաժման աշխատանքները:

Վերակառուցման աշխատանքները ներառում են նաև շենքի սեյսմակայունության բարձրացման, ջերմային կորուստների նվազեցման և շենքի էներգախնայողության բարձրացման միջոցառումները:

Նախագծվող շենքերում բաժանումները կիրականացվեն պեմզաբլոկով, կտեղադրվեն նոր մետաղեպլաստե պատուհաններ, այլումինե և ջերմակամուրջով արտաքին դռներ: Ըստ ֆունկցիոնալ նշանակության՝ կտեղադրվեն նաև ներքին մետաղեպլաստե, այլումինե և հատուկ ճառագայթապաշտպան դռներ: Շենքում նախագծվել են երկու վերելակներ՝ մարդատար և բեռնատար: Ըստ գործող շինարարական նորմերի՝ նախատեսվում է նաև նոր էլեկտրասնուցման և լուսավորության ցանցեր, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու և գազամատակարարման ցանցեր, ինչպես նաև նոր օդափոխության և ջեռուցման համակարգեր: Հիմնական մասնաշենքի և կառուցվող նոր մասնաշենքի միացման հատվածում կկառուցվի նոր հատվածամաս, որտեղ նախագծվում է նոր մարդատար վերելակի տեղադրման և սպասասրահի լուծումներ:

Վաղարշապատի ԲԿ-ի նախագծային լուծումներում հաշվի են առնված նաև սակավաշարժ խմբերի համար հարմարեցված սանհանգույցներ, ինչպես նաև թեքահարթակներ մուտքերում՝ ինչպես սակավաշարժ խմբերի, այնպես էլ հիվանդների և այլ այցելուների համար:

Մասնաշենքի տանիքը նախատեսվում է կառուցել լանջավոր, իսկ ծածկույթի համար կօգտագործվի պրոֆիլավորված գործարանային ներկված ցինկապատ թիթեղներ: Վերակառուցվող շենքերի տանիքները կունենան կազմակերպված արտաքին ջրահեռացում:

Բարեկարգման աշխատանքների շրջանակում նախատեսվում է իրականացնել տարածքի գոյություն ունեցող բազալտե և բետոնե եզրաքարերի փոխարինում նորերով: Տարածքի երթևեկելի մասերում և մայթերում նախատեսվում է նոր ասֆալտի իրականացում: Նախատեսվում է նաև գոյություն ունեցող ցանկապատի ապամոնտաժում, նոր մետաղական ցանկապատի իրականացում, իսկ տարածքի ցանկապատի մյուս հատվածների վնասված մասերը նախատեսվում են վերականգնել: Ցանկապատի հիմնական մուտքում կտեղադրվեն նոր մետաղական դռնակներ և դարպաս, որտեղից

կապահովվի բժշկական կենտրոնին մոտեցումը: Տարածքում կտեղադրվեն նաև նոր լուսատուներ:

Տարածքում գոյություն ունեցող կանաչապատ տարածքների մակերեսը կազմում է 2104.9 քմ: Վերակառուցման նախագծի շրջանակներում նոր կանաչապատ տարածքների ընդհանուր մակերեսը կդառնա 2217.9 քմ: Կանաչապատման աշխատանքների շրջանակում նախատեսվում է 113 քմ մակերեսով տարածքում սիզամարգերի իրականացում, որտեղ կցանվեն նաև ծաղիկներ:

### **5.1 Բժշկական կենտրոնի արևային կայան**

Էջմիածին քաղաքի, Սպանդարյան 1 հասցեում գտնվող "Վաղարշապատ հիվանդանոց" ՊՓԲԸ վերակառուցման նախագծով նախատեսվում կառուցել արևային ֆՎ կայան, ինչի համար հիմք են հանդիսացել՝ տեղազննման արդյունքները և շինության և տեղանքի հատակագծերը:

Նախագծով նախատեսվում է 26,460 կՎտ պիկային հզորությամբ արևային ՖՎ համակարգի տեղադրում բժշկական կենտրոնի երկու մասնաշենքերի տանիքներին: Տեղակայման աշխարհագրական կոորդինատներն են՝ հյուսիսային լայնության 400/32'04,03 և 440/57'68,40'' արևելյան երկարության, 874 մ բարձր ծովի մակարդակից:

Տեղանքում տարեկան հորիզոնական ճառագայթումը մոտ 1782 կՎտժ/մ<sup>2</sup> է: Տարվա մեջ անարև օրերի քանակը 37 օր է: Առավելագույն դրական և բացասական ջերմաստիճանները համապատասխանաբար՝ +410C և -310C:

ՖՎ պանելները տեղադրվելու են հիվանդանոցի մասնաշենքի տանիքին՝ հորիզոնի նկատմամբ 320/ անկյունով և ուղղված դեպի հարավ:

"Վաղարշապատ հիվանդանոց" ՊՓԲԸ կաթսայատան տանիքին տեղակայվող արևային ջրատաքացուցիչ համակարգը բաղկացած է երկու խումբ՝

2. հարթ(FLAT PLATE) տեսակի կոլեկտորներից՝ յուրաքանչյուր խմբում 5 հատ 3 քմ մակերեսով:

3. Երկու ավտոնոմ միաժամանակ աշխատող ջերմափոխանակիչ ջերմամեկուսացված ծավալային բաքերից՝ յուրաքանչյուրը 1000լ տարողությամբ՝ պղնձե ջերմափոխանակիչով և 3000Վտ հզորությամբ էլեկտրական ջեռուցիչներով:

Երկու ավտոնոմ աշխատող կարգավորիչիցներով /controller/, որոնցով կառավարվում են շրջանառու պոմպերը, էլեկտրամագնիսական փականները ու էլեկտրաջեռուցիչները:

Անվտանգության ստանդարտը՝ IEC, որը համարժեք միջազգային (IEC62109, IEC61727, IEC 62116, IEC61000, IEC 61683, IEC 60068-2) ստանդարտին:



Արևային համակարգերի առաջնային կոնտուրը լիցքավորվում է չսառչող հեղուկով՝ պրոպիլենգլիկոլով:

Էլեկտրամատակարարումը շարունակվում է ВВГнг 3x4,0 մմ<sup>2</sup> մալուխային գծով դեպի առաջին հարկի 0,4 կՎ բաշխիչ վահանակ: Արևային կարգավորիչին կից պլաստմասե տուփում (260x180x65մմ) տեղադրվում են փոփոխական հոսանքի 2 հատ երկբևեռ դիֆերենցիալ ավտոմատ անջատիչներ և 2 հատ երկբևեռ դիֆերենցիալ ավտոմատ անջատիչներ:

Արևային համակարգի հողանցումն իրականացվում է կառուցվող հողանցման կոնտուրից՝ բնահողում տեղադրված 10 հատ էլեկտրոդներից և շերտապողպատից: Հողանցման սարքվածքի հորիզոնական հատվածի խորությունը հողի տակ պետք է լինի 0,5մ-ից ոչ պակաս: Հողանցիչի համար կիրառվող դետալներն ու հանգույցները համապատասխանում են ՀՀ գործող տեխնիկական պահանջներին:

Բոլոր էլեկտրամոնտաժային աշխատանքները կատարել ըստ գործող նորմերի СНиП 3.05.06-85, ПУЭ, ինչպես նաև ՀՀ ստանդարտ ՀՍՏ 335-2011 «Արևային լուսաէլեկտրական կայանքների միացումը էլեկտրաէներգետիկական համակարգի ընդանուր նշանակության էլեկտրական ցանցի դրույթներին»:

### **Արևային կարգավորիչի տեխնիկական պահանջները**

Ամեն խմբի արևային կարգավորիչը պետք է ապահովի առնվազն երկու ջերմային տվիչի ցուցիչների գնահատական /կոլեկտորի ու բաքի ջրի/, ինչպես նաև հնարավորություն ունենա ապահովելու շրջանառու պոմպի աշխատանքը, /հզորությունը առնվազն 0.5 կՎտ/, Էլ/մագնիսական փակնների /հզորությունը առնվազն 1 կՎտ/ և աշխատացնելու էլեկտրական ջրատաքացուցիչը /առնվազն 3.0 կՎտ/:

## **5.2 Նախագծով նախատեսված բժշկական գագերի /թթվածին/, սեղմած օդի,**

### **վակուումի համակարգեր**

1. Թթվածնի ստացման աղբյուր է հանդիսանում թթվածնի մատակարարման հանգույցը /ռամպան/, որը տեղադրված է գոյություն ունեցող միհարկանի շինությունում: Հանգույցում տեղադրված են բալոններ և ճնշման կարգավորիչներ: Յուրաքանչյուր բալոնը 40լ տարողությամբ են և միջազգային ստանդարտով /ISO 9001.2008/:

2 Սեղմած օդը ստացվում է տեխնիկական հարկում գտնվող ճնշակայանում տեղադրված երկու ճնշակներից, յուրաքանչյուրը՝ 420լ/րոպե արտադրողանությամբ: Ճնշակները յուղազերծ են, ներառված են ձայնամեկուսիչ պատյանի մեջ և ունեն հավաստագիր՝ ISO 8573-1, ստացվող օդը 0 դասի է: Յուրաքանչյուր ճնշակը տեղադրված է կուտակիչի վրա: Եվ ճնշակները, և չորացուցիչները իրենց կազմի մեջ ունեն վերահսկման և դեկավարման բլոկ:

3. Սպառիչներին վակուումով ապահովելու համար շենքի տեխնիկական հարկում նախատեսվում է Վակուումային կայան, որտեղ նախատեսվում է տեղադրել վակուումային սարքավորում և երկու պոմպեր՝ յուրաքանչյուրը 21մ<sup>3</sup>/ժամ արտադրողականությամբ կուտակիչի հետ միասին: Վակուումային սիստեմը իր մեջ ներառում է հակաբակտերիալ ֆիլտրերի բլոկ՝ ֆիլտրեր /գտիչ/: Վակուումի խողովակները սպառիչներից բարձրանում են, մտնում են կախովի առաստաղներ, հասնում են հորանին, բարձրանում են մինչև տեխնիկական հարկ և հասնում են վակուում պոմպերին:

4. Թթվածնի խողովակները անց են կացվում մասնաշենքի արտաքին պատով, մասնաշենքի միջանցքների, սենյակների կախովի առաստաղներով և թթվածին օգտագործող սենյակների ներքին պատերով: Պատերի վրայով անցնող խողովակները ծածկվում են քողարկման տուփերով և մոտեցվում են վահանակների վրա տեղադրված թթվածնի, սեղմած օդի և վակուումի վարդակներին:

Թթվածնի, սեղմած օդի և վակուումի համար նախատեսված են պղնձե խողովակներ ԳՕՍՍ 617-2006:

Բժշկական գազերի մոնտաժման համար նախատեսված խողովակները պետք է ենթարկվեն նախնական զննման խողովակների ներքին մակերևույթին յուղի բացակայությունը ստուգելու համար: Մոնտաժումից հետո խողովակները փորձարկվում են պնևմատիկորեն հերմետիկություն և ամրությունը ստուգելու համար: Մոնտաժված խողովակները փորձարկումից հետո պետք է լրացուցիչ փչամաքրվեն և ենթարկվեն լվացման: Խողովակների մոնտաժը, փորձարկումը, շահագործման հանձնումը և շահագործումը իրականացնել համաձայն նորմերի և կանոնների:

### ***5.3 "Վաղարշապատ հիվանդանոց" ՊՓԲԸ-ի մասնաշենքերի ջեռուցման և օդափոխության համակարգեր***

***Ջեռուցում.*** ԲԿ-ի ջեռուցումը նախատեսվում է իրագործել գոյություն ունեցող կաթսայատան միջոցով: Կաթսայատան շահագործումը կիրականացվի ջրային երեք կաթսաների միջոցով, բնական գազի այրմամբ: Բկ-ում կաթսայատան հարևանությամբ նախատեսվում է նաև հեղուկ վառելիքի համար նախատեսված պահեստարան:

Կաթսայատան ջուրն օգտագործվելու է միայն ջրաջեռուցիչ կաթսաների և ջերմային ցանցերի միանվագ լցման համար, որը հետագայում կլրասնուցվի համակարգում ջրային կորուստների առաջացման դեպքում: Արտադրական հոսքաջրերի առաջացումը բացառվում է, քանի որ կաթսայատանը ջրապատրաստման գործընթաց չի նախատեսվում:

Նախագիծը կատարված է ըստ առաջադրանքի, գլխավոր հատակագծի և շինարարական նորմերի և կանոնների՝ ՀՀՇՆ IV-12.01.04, СНиП 2.08.02-89, СП 158.13330.2014:

Վերակառուցվող և նոր կառուցվող մասնաշենքերում նախագծված է երկխողովականի վերին մատակարարումով, ջերմատարի համընթաց շարժումով ջեռուցման համակարգեր: Մատակարարող խողովակներն անցնում են ձեղնահարկի հատակի վրայով: Վարչատնտեսական մասնաշենքում նախագծված է ներքին մատակարարումով, ջերմատարի համընթաց շարժումով ջեռուցման համակարգ: Մատակարարող խողովակներն անցնում են նկուղային հարկի հատակի վրայով:

Որպես ջեռուցման սարքեր ընտրված են այլումինե ջեռուցիչներ, իսկ վիրահատարաններում, ինտենսիվ թերապիայի սենյակներում, ռենտգեն կաբինետում, լաբորատորիաներում՝ պանելային պողպատյա ջեռուցիչներ:

Համակարգերից օդը հեռացվում է հիմնական մասնաշենքում մատակարարող խողովակների ամենաբարձր կետերում տեղադրված հորիզոնական օդահավաքիչների միջոցով, իսկ վարչատնտեսական մասնաշենքում՝ ջեռուցիչների վրա տեղադրված օդահան ծորանների միջոցով:

Համակարգերի դատարկումը իրականացվում է վերակառուցվող և նոր մասնաշենքերում մուտքագծերի վրա տեղադրված դատարկման ծորաններով փականների միջոցով, իսկ վարչատնտեսական մասնաշենքում դատարկման ծորանների միջոցով:

Ջեռուցման խողովակները պոլիպրոպիլենից են, իսկ մուտքագծերը՝ մետաղական:

Մոնտաժման աշխատանքների ավարտից հետո ջեռուցման համակարգը ենթարկվում է հիդրավիլիկական և ջերմային փորձարկման, որից հետո ձեղնահարկով անցնող խողովակները մեկուսացվում են ֆոլգապատ ապակեբամբակով:

#### ***5.4 Օդափոխություն***

Հիվանդանոցի մասնաշենքերում նախատեսված է մեխանիկական դրդմամբ օդափոխության ներածման և արտածման, ինչպես նաև օդի լավորակման համակարգեր: Օդի լավորակման համակարգեր նախատեսված են վիրահատարանների և ինտենսիվ թերապիայի սենյակների համար: Այս համակարգերում օդը լրացուցիչ մաքրվում է մանրեագերծիչ գտիչներում, որոնցից հետո օդատարները նախատեսվում են չժանգոտվող պողպատից: Օդի արտածումը վիրահատարաններից, ինտենսիվ թերապիայի

սենյակներից, ռենտգեն կաբինետից իրականացվում է երկու գոտուց՝ 40%վերևի գոտուց, իսկ 60%՝ ներքևի:

Օդափոխության և օդի լավորակման համար տեղակայված են “REMAK” ֆիրմայի առողջապահության համար նախատեսված կոմպակտ համակարգեր, որոնք կարող են փոխարինվել համարժեք պարամետրերով այլ համակարգերի:

Օդափոխության համակարգերը տեղադրված են ձեռնահարկերում: Էներգիայի խնայողության համար որոշ համակարգերում տեղադրված են օդի վերօգտագործման սարքեր:

Լավորակման համակարգերում օդի հովացումը կատարվում է CHFմակնիշի անմիջական օդասառեցուցիչների միջոցով, որոնց արտաքին բլոկները տեղադրվում են տանիքի վրա:

Օդի ներածումը և արտածումը իրականացվում է կարգավորվող ճաղավանդակների միջոցով:

Օդափոխության ներածման սարքերը և օդատարերը ջերմամեկուսացվում են:

### ***5.5 Ջերմամատակարարում***

"Վաղարշապատ հիվանդանոց" ՊՓԲԸ-ի մասնաշենքերի ջերմամատակարարման նախագիծը կատարված է ըստ առաջադրանքի, գլխավոր հատակագծի և շինարարական նորմերի և կանոնների՝ СНиП 2.04.07-86:

Հիվանդանոցի մասնաշենքերի ջերմամատակարարումն իրականացվում է գոյություն ունեցող նախագծի շրջանակներում վերակառուցվող սեփական կաթսայատնից: Ջերմատարը ջուր է՝  $T_1=80^{\circ}\text{C}$ ,  $T_2=60^{\circ}\text{C}$  պարամետրերով:

Ջերմային ծախսերը կազմում են՝

- վերակառուցվող մասնաշենք  $Q/\text{ջեռ.}+\text{օդ.}=292\text{կվտ}$
- նոր մասնաշենք  $Q/\text{ջեռ.}+\text{օդ.}=144\text{կվտ}$
- վարչատնտեսական մասնաշենք  $Q/\text{ջեռ.}+\text{օդ.}=74\text{կվտ}$
- տաք ջրամատակարարում  $Q/\text{տ.ջուր}=130 \times 1.2=156\text{կվտ}$ :

Ջերմատարը կաթսայատնից DN125 խողովակներով մտնում է վարչատնտեսական մասնաշենքի նկուղային հարկի ջերմային կետ, որտեղից բաժանարար սանրիկից առանձին ճյուղերով բաժանվում է մասնաշենքերին:

Ջերմատարը ջեռուցման և օդափոխության համար հանդիսանում է տաք ջուրը՝  $T_1=80^{\circ}\text{C}$ ,  $T_2=60^{\circ}\text{C}$  պարամետրերով, իսկ տաք ջրամատակարարման համար՝  $T_3=65^{\circ}\text{C}$ :

Ջերմային ցանցի ջեռուցման խողովակները մոնտաժվում են էլեկտրագողված պողպատյա խողովակներից, տաք ջրամատակարարման խողովակագծերը՝

գազաջրատար պողպատյա խողովակներից: Ջերմացանցի խողովակները ջերմամեկուսացվում են ֆոլգապատ ապակեբամբակով:

## 5.6 Ջրամատակարարում և ջրահեռացում

Նախագծվող ԲԿ-ի ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացները կազմակերպվելու են գործող շինարարական նորմերի ու կանոնների, ինչպես նաև «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրամադրված (05/11/2019թ.) նախագծման տեխնիկական պայմանի (ԱՄ 166) համաձայն: Վերակառուցվող ԲԿ-ի ջրամատակարարման համակարգը կկազմակերպի գործող համակարգով, տարածքի հարևանությամբ անցնող համայնքային ջրագծին միացմամբ:

Նախագծով նախատեսված է՝

- Սառը կենցաղային, խմելու և հակահրդեհային ջրամատակարարման համակարգ,
- Տաք ջրամատակարարման համակարգ,
- Կենցաղային կոյուղու ցանց:

Օբյեկտի ջրամատակարարումը համաձայն տեխնիկական պայմանների իրականացվում է նախագծված արտաքին ցանցից:

Տաք ջրամատակարարումը իրականացվում է արևային համակարգից և գործող կաթսայատնից և որպես այլընտրանքային տարբերակ նախատեսվում է նաև բնական գազով աշխատող ջրատաքացուցիչ:

Տաք ջրամատակարարման ցանցը նախատեսված է շրջանարու խողովակով: Մուտքող և շրջանառու խողովակները անցկացվում են նկուղային հարկի առաստաղի տակ, խմելու և կենցաղային համակարգի խողովակների հետ զուգահեռ: Ներքին ցանցերը մոնտաժվում են պողպատյա ջրագազատար 50,40 մմ տրամագծի պոլիպրոպիլենե խողովակներից: Բոլոր նկուղում անցկացվող խողովակները մեկուսացնել "TERMAFLEX" խողովակներով: Հաշվի առնելով որ ջրի ճնշումը չի ապահովում շենքի հաշվարկային տվյալները, նախագծով նախատեսված է տեղադրել ճնշում բարձրացնելու սարքավորում " CR15-2" երկու պոմպով:

Տաք և սառը ջրամատակարարման հաշվարկային ելքերը որոշվել են հաշվի առնելով ԲԿ-ի տեխնոլոգիական պահանջները և սպասարկվող մարդկանց քանակը: Համաձայն գործող շինարարական նորմերի՝ անհրաժեշտ ջրի քանակը հաշվարկվում է  $Q_{max}/վրկ=2.5$   $վ/վրկ$ , իսկ շենքի հրդեհմարման համար անհրաժեշտ ջրի քանակությունը՝  $4.1$   $վ/վրկ$  :

Կենցաղային հոսքերը սանիտարատեխնիկական սարքավորումներից ինքնահոս խողովակներով հեռացվում են նախագծվող արտաքին ցանցի մեջ: Ներքին ցանցերը անցկացվում են պոլիվինիլքլորիդային կոյուղու խողովակներից՝ Ø110;50մմ:

Կոյուղաջրերի և կենցաղային ջրերի հեռացման համար, ըստ տեխնիկական առաջադրանքի, նախատեսվում է նոր դիտահորի կառուցում ԲԿ-ի կոյուղագծի և հարևանությամբ անցնող համայնքային կոյուղագծի (d=300 մմ) միացման կետում: Կոյուղագծերի միացման տեղում նախատեսվում են նաև սանիտարական լուծումներ, մասնավորապես կտեղադրվեն մանրէասպան սարքեր, քանի որ ԲԿ-ում նախատեսվում է ինֆեկցիոն բաժանմունքի ծառայություններ:

Տարածքից մակերևութային ջրերի հեռացումը վերակառուցված ԲԿ-ի շահագործման ընթացքում կիրականացվի ինքնահոս եղանակով, ինչպես և նախկինում գոյություն ունեցող բնական թեքություններով և դեպի կանաչապատ գոտիներ:

### 5.7 Շինարարական աշխատանքների կազմակերպում

Ինչպես վերը նշվեց ներկայացվող գործունեության ընթացքում նախատեսվում է իրականացնել՝

- ԲԿ-ի նոր հիվանդանոցային մասնաշենքի կառուցում,
- հիվանդանոցի գոյություն ունեցող մասնաշենքի վերակառուցում
- վարչական մասնաշենքի կառուցում
- կաթսայատան վերակառուցում,
- ԲԿ-ի հիմնական մասնաշենքի կառուցում
- տարածքի ազատ գոտիների բարեկարգում և կանաչապատում:

Վաղարշապատի ԲԿ-ի վերակառուցումը հողային աշխատանքներ չի ներառում, քանի որ մասնաշենքերը կառուցվելու են քանդվող շինությունների տարածքներում: Շինարարական աշխատանքների տևողությունը գնահատվում է 24 ամիս: Նախաշինարարական փուլում, համաձայն գործող նորմերի կիրականացվի ԲԿ-ի տարածքի ժամանակավոր մետաղական թիթեղե (2,5մx1.2մ) ցանկապատի իրականացում՝ ապահովելով առողջության և աշխատանքի անվտանգության պայմանները: Հրապարակի ցանկապատումը կիրականացվի այնպես, որ չխոչնդոտվի մնացած մասնաշենքերի բնականոն աշխատանքը և կապահովվի մասնաշենքին մուտեցումը և շինաշխատանքների ընթացքում վերջինիս շահագործումը: Շինհրապարակի կազմակերպման աշխատանքները կիրականացվեն բացառապես ԲԿ-ի տարածքի ներսում կազմակերպված շինարարական հրապարակում, բնապահպանական միջոցառումների ծրագրում ներկայացված պլանին համաձայն, մասնավորապես պլանում հաշվի են առնված շինանյութերի ժամանակավոր պահեստավորման և թափոնների կուտակման

Ժամանակավոր վայրերը, շինարարական տեխնիկայի կայանատեղիները, աշխատողների և բանվորական կազմի սանիտարա հիգիենիկ պայմանները (ընդմիջման և հանգստի հարմարություններ, խմելու և կենցաղային կարիքների ջուր, զուգարան, աշղեկի աշխատասենյակ) և այլն: Նշված աշխատանքների շրջանակում կիրականացվեն նաև կոմունիկացիաների վերատեղադրման և տեղափոխման աշխատանքները և վերջիններիս միացման աշխատանքները գոյություն ունեցող կոմունիկացիաներին:

Վաղարշապատի ԲԿ-ի վերակառուցման աշխատանքները կսկսվեն գոյություն ունեցող շենքերի ապամոնտաժման աշխատանքներից հետո, մասնավորապես ըստ հաջորդականության կիրականացվեն շենքի տանիքի, միջնորմերի, հատակների, պատուհանների, ներքին և արտաքին դռների, ներքին ինժինեռական ցանցերի ապամոնտաժման աշխատանքները: Ապամոնտաժման աշխատանքներում կօգտագործվեն ձեռքի կտրող գործիքներ և կբացառվեն այլ խոշոր քանդող տեխնիկայի կիրառումը: Վերակառուցվող մասնաշենքի ապամոնտաժման աշխատանքներից կառաջանա 440 խմ շինաղբ:

Նոր կառուցվող մասնաշենքի տարածքում առկա երկհարկանի շինության /որը զբաղեցնում է 300քմ/ քանդումից կառաջանա 1400 խմ շինաղբ, իսկ վարչական շենքի կառուցման տարածքում առկա մեկ հարկանի շինության /որը զբաղեցնում է 280քմ/ քանդումից կառաջանա 840 խմ շինաղբ:

ԲԿ-ի գոյություն ունեցող կաթսայատունը միահարկ է, իրականացված կանոնավոր տուֆից, տանիքը լանջավոր է, փայտե կմախքով և թիթեղե ծածկով: Ներկայացվող գործունեության վերակառուցման աշխատանքների շրջանակում նախատեսվում է պահպանել կաթսայատան մասնաշենքի արտաքին պատերը և ծածկերը: Ինչպես հիմնական մասնաշենքի դեպքում, այստեղ ևս կիրականացվեն շենքի նոր միջնորմերի, տանիքի, հատակների, պատուհանների, դռների, ներքին ինժինեռական ցանցերի իրականացման աշխատանքները:

Գործունեության ընթացքում քանդման աշխատանքներից կգոյանա շուրջ 2 700խ.մ շինաղբ, որը գնահատվում է երկրորդային օգտագործման համար ոչ պիտանի և ինքնաթափերով կտեղափոխվի և կթափոնակույտովի 3 կմ հեռավորության վրա գտնվող Վաղարշապատի համայնքային աղբավայրում, կամաձայնեցված համայնքի ղեկավարի հետ:

Բարեկարգման աշխատանքների շրջանակում նախատեսվում է առկա ասֆալտի շերտի (49.71 խ.մ) ֆրեզերովկա, որը որպես երկրորդային հումք նախատեսվում է վերամշակել և հետագայում օգտագործել ասֆալտապատման աշխատանքներում՝ հաշվի

առնելով վերջինիս վտանգավորությունը և ռեսուրսների արդյունավետ և հեռանկարային կառավարման երաշխիքները, ներկայացվող վերակառուցման աշխատանքների ընթացքում: Շինարար կապալառուի վերամշակման փորձը կամ վերամշակող գործարանին հանձնելու տարբերակները կհստակեցվեն աշխատանքների շինարարության փուլում, երբ հայտնի կլինի հաղթող ճանաչված շինարարական ընկերությունը:

Շինարարական աշխատանքների տևողությունը գնահատվում է 30 ամիս:

N	ԱՇԽԱՏԱՆՔՆԻ ԱՎԱՆՈՒՄ	ՕՐԵՐ									
		36	72	108	144	180	216	252	288	324	365
1	ՇԻՆ ՀՐԱՊՈՒՐԱԿԻ ԿԱՑՄԱԿԵՐՈՒՄ /ԳԵՌՊԵՋԻԱԿԱՆ ԵՃԱԿՈՒՄ, ԺԱՄԱՆԿԱԿՈՐ ՊՍՈՒՄՊ, ԿԵՆՍԱՄԱՀՈՎԱՄԱՆ ԺԱՄԱՆԿԱԿՈՐ ՑԱՍԵՐ, ԱՇՂԵԿԻ ՍԵՆՅԱԿ .../										
2	ԳՐՈՒՆՏԻ ՄԵԱԿՈՒՄ ՀԻՄՔԵՐԻ ԽՐԱՄԱՏՆԵՐԻ ԵՎ ՓՈՍՏՈՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ										
3	ՀԻՄՔԵՐԻ ԵՎ ՈՐՄԱՆԱՆՈՒՄԻ ԻՐԱԿԱՑՈՒՄ										
4	Ե/ԲԵՏՈՆԵ ԿՄԱՍԹԻ ԻՐԱԿԱՑՈՒՄ										
5	ԾԱԾԿԵՐԻ ԻՐԱԿԱՑՈՒՄ										
6	ԱՄՆԱԿՈՐ ՑԱՍԻՔԻ ԾԱԾԿԵՐ ԵՎ ՑԱՍԻՔԱԾԱԾԿԱՑԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ										
7	ՄԻՋՆՈՐՈՄՆԵՐ, ԻՆՃԵՆԱՐԱԿԱՆ ՑԱՍԵՐ										
8	ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ										
9	ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ										

		ՊՆԱՅԻՆՏԻՊԻ ԲԱՆԱՊՐԱՆԱԿԱՆ ԿՈՒՆԻ		ՊՆԱՅԻՆՏԻՊԻ ԱՅԻՆԱԿԱՆ ԿՈՒՆԻ	
		Հայաստանի Հանրապետություն		Հայաստանի Հանրապետություն	
		Հայաստանի Հանրապետություն		Հայաստանի Հանրապետություն	
Բն.	Կոմ.	Բն.	Պ.Պ.	Բն.	Պ.Պ.
ք.	մար.	թիվ	թիվ	թիվ	թիվ
ՍՊԸ	ՍՊԸ				
ՍՊԸ	ՍՊԸ				
ՍՊԸ	ՍՊԸ				
		ՊՆԱՅԻՆՏԻՊԻ ԿՈՒՆԻ		ՊՆԱՅԻՆՏԻՊԻ ԿՈՒՆԻ	
		Հայաստանի Հանրապետություն		Հայաստանի Հանրապետություն	
		Հայաստանի Հանրապետություն		Հայաստանի Հանրապետություն	



Շինաշխատանքների իրականացումը կիրականացվի մրցութային կարգով ընտրված շինարար կապալառուի կողմից:

Շինարարության ընթացքում կօգտագործվեն շինարարական կազմակերպության շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում կիրականացվի անհրաժեշտ տեխնիկայի վարձակալություն: Աղյուսակ 3.-ում բերվում են աշխատանքների ընթացքում պահանջվող ռեսուրսների քանակը: Շինարարության ընթացքում անհրաժեշտ ջրի քանակը նախատեսվում է վերցնել տարածքում գոյություն ունեցող ջրագծից: Պահանջվող էլեկտրաէներգիայի մատակարարումը կիրականացվի 0,4 կՎտ օդային մալուխային գծից:

**Աղ. 3 Շինարարության ժամանակ պահանջվող ռեսուրսների քանակը:**

Անվանումը	Չափման միավորը	24 ամիս (շին. տևողությունը)
Էլեկտրաէներգիա	ԿՎա	83.5
Վառելիք	տ	10
Ջուր	լ/վրկ	0.2
Խտացրած օդ (կոմպրեսոր)	հատ	1

Շինարարության ընթացքում անհրաժեշտ մնացած նյութատեխնիկական ռեսուրսների մատակարարումը կիրականացվի լիցենզավորված կազմակերպություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ շինանյութերը՝ կաղապարամած, ամրան, բետոնաշաղախ, կաֆել, մետլախ, լամինատ և նմանատիպ այլ նյութեր ձեռք են բերվելու լիցենզավորված մատակարարներից:

Շինմեխանիզմների համար անհրաժեշտ վառելիքի քանակը ապահովվելու է շինարարական հիմնարկի պահեստերից, իսկ խտացրած օդը նախատեսվում է մատակարարել շարժական կայաններից (ՁԻՖ-55 մակնիշի):

Շինարարական տեխնիկայի կազմը ներկայացված է Աղ4-ում:

**Աղյուսակ.4 Պահանջվող հիմնական մեքենաների և մեխանիզմների կազմը:**

h/h	Անվանումը	Չափի միավոր	Քանակը
1.	Ունիվերսալ էքսկավատոր	հատ	1
2.	Ավտոբետոնախառնիչ	հատ	1
3.	Ավտոամբարձիչ	հատ	1
4.	Բետոնամուղ պոմպ	հատ	1
5.	Բետոնախառնիչ	հատ	1
6.	Ավտոինքնաթափ	հատ	4
7.	Բեռնատար ավտոմեքենա, կողավոր	հատ	1
8.	Թրթռան մակերեսային	հատ	4
9.	Թրթռան խորքային	հատ	4
10.	Փոխարկիչ թրթրիչների համար	հատ	1
11.	Շարժական կոմպրեսոր	հատ	1
12.	Հետհար մուրճ	հատ	1
13.	Եռակցող ագրեգատ	հատ	1
14.	Եռակցման տրանսֆորմատոր	հատ	3
15.	Դակիչ ձեռքի էլեկտրական	հատ	4
16.	Ձեռքի էլեկտրական դուր	հատ	4
17.	Տոփանման սարք	հատ	2

**6. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲԱՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

**6.1 Շրջանի համառոտ ֆիզիկա-աշխարհագրական պայմանները**

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ /Էջմիածին/ համայնքում գործող «Վաղարշապատ բժշկական կենտրոնի» տարածքում: Էջմիածին քաղաքը Երևանից գտնվում է 20կմ հեռավորության վրա:

Հետազննվող տարածքը ընդգրկված է Արարատյան հարթավայրի կենտրոնական մասում: Մակերեսն ունի ոչ մեծ թեքություններ՝ հյուսիսից հարավ և արևելքից-արևմուտք: Հիվանդանոցի տարածքի հարթակի ռելիեֆը հարթ է և տեղաբաշխված է 874.5-875.5մ նիշերի սահմաններում:

**Գեոմորֆոլոգիական տեսակետից** տարածաշրջանը տեղադրված է լճակուտակումային Արարատյան հարթավայրի սահմաններում, նրա կենտրոնական մասում: Մակերեսն ունի ոչ մեծ թեքություններ հյուսիսից հարավ և արևելքից-արևմուտք դեպի Արաքս գետի կողմը:

## 6.2 Շրջանի երկրաբանական պայմանները

Ըստ ֆոնդային նյութերի և տարածաշրջանի մանրամասն տեղագնման, Էջմիածին քաղաքի տարածքի երկրաբանական կտրվածքում մասնակցում են չորրորդական հասակի լճային-ալյուվիալ նստվածքները, որոնք ներկայացված են՝ ավազակավերով, ավազներով, լճային կավերով և գլաքարա-ճալաքարա-կոպճային առաջացումներով: Ուսումնասիրված տեղամասում հիմնական ապարները ճալաքարային են:

Երկրաբանալիթոլոգիական կտրվածքին մասնակցում հետևյալ երկու շերտերը.

1. Լիցքեր՝ կազմված խճի, խճավազից, և կավավազների խառնուր հորատված հզորությունը 0,8-1,5 մետր է: Շերտը համատարած է: Դրանք ժա տեխնածին առաջացումներ են:

2. Ճալաքարային գրունտներ՝ գետաքարի, կոպիճի, ավազի պարունակությամբ: Շերտն ունի համատարած բնույթ, հզորությունը 6,5մ-7,2մ է:

Տվյալ արդյունքներով պարզ է դառնում, որ գրունտները կառույցների հիմքերի խորությունների վրա հիմնականում ճալաքարային են:

**Տեղանքի ինժեներաերկրաբանական պայմանները** գնահատվում են բարենպաստ նախագծվող բժշկական կենտրոնի շինարարական աշխատանքների իրականացման համար: Նախագծվող տարածքում բացակայում են շինարարության և կառուցվածքների վրա ազդող ֆիզիկա-երկրաբանական, բնական երևույթները (սողանքներ, կարստ, փլուզումներ և այլն): Տարածքում վտանգավոր երևույթներ չեն նկատվում:

## 6.3 Շրջանի հիդրոլոգիական պայմանները

Հիդրոերկրաբանական տեսակետից Էջմիածին քաղաքի այս հատվածի տարածքը ըստ ֆոնդային տվյալների հանդիսանում է լավ ջրաթափանց և ջրանցիկ գոտի, Ստորերկրյա ջրերի մակարդակը Էջմիածին քաղաքի տարածքում տատանվում է 12-45մ սահմաններում:

Հետազնվող տեղամասում հորատված հորատանցքներում գրունտային ջրեր 8,0մ հորատանցքներով չեն հայտնաբերվել:

## 6.4 Մեյսմիկ բնութագրերը


Համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 «Մեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»-ի և ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի՝ Էջմիածին համայնքը

գտնվում է սեյսմիկ երրորդ սեյսմիկ գոտում, գրունտների հնարավոր սեյսմիկ արագացումները կազմում են  $A = 0.4g$  և ունի 9 և ավելի բալ սեյսմիկ ռիսկայնության աստիճան:

### 6.5 Կլիմայական պայմանների հակիրճ նկարագրությունը

Ուսումնասիրվող գոտին համաձայն «Շինարարական կլիմայաբանության» (ՀՀՇՆ II-7.01-2011)-ի գտնվում է «տաք կլիմայական շրջանում: Շրջանը ունի ցուրտ ձմեռով և շոգ ամառով, չոր, խիստ ցամաքային կլիմա: Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է  $+41^{\circ}\text{C}$  (Էջմիածին կայան): Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը կազմում է  $-31^{\circ}\text{C}$  (Էջմիածին կայան): Օդի միջին հարաբերական խոնավությունը 60% է:

Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 280մմ, գերակշռում են արևմտյան, հարավ-արևմտյան ուղղության քամիները: 25 տարվա ընթացքում հնարավոր են 20մ/վրկ ուժգնության քամիներ, 50 տարվա մեջ 23մ/վրկ ուժգնության քամիներ: Քամու արագության ճնշումը՝ 35կգ/մ<sup>2</sup>: Ձյան ծածկույթի հաստությունը հասնում է 40սմ, իսկ ձյան բեռնվածքի ճնշումը՝ 50կգ/մ<sup>2</sup>: Բնահողի սառչելու առավելագույն խորությունը 60 սմ է:



Նկ. 3 Կլիմայական շրջանացման սխեմատիկ քարտեզ

6.6

### 6.7 Բնապահպանական հատուկ պահպանվող տարածքներ և պատմամշակութային հուշարձաններ

Գործունեության իրականացման տեղանքին հարակից չկան արգելոցներ, ազգային պարկեր կամ հատուկ պահպանվող տարածքներ, ինչպես նաև բնութագրվող տարածքում և տարածքի մերձակայքում չկան ազդեցության ենթակա պատմամշակութային հուշարձաններ:

Էջմիածինը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով, հուշարձաններով, թանգարաններով: Վաղարշապատ ԲԿ-ի տարածքին ամենամոտ գտնվող պատմամշակութային հուշարձանը <<Մայր տաճարն>> է, հեռավորությունը 1 կմ:

## 6.8 Օդային ավազան

Օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի տեղեկատվության և մոնիտորինգի կենտրոն» (ՇՄՏՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից: Հաշվի առնելով այն, որ Էջմիածին համայնքում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները բացակայում են, սույն հայտում բերվում են օդային ավազանի ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքները:

ՀՀ բնակավայրերի (բացառությամբ Երևան, Վանաձոր, Արարատ, Հրազդան և Գյումրի քաղաքների) մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները ներկայացված են Աղյուսակ 4-ում, որոնց հաշվարկները կատարվել են ըստ տվյալ բնակավայրի ազգաբնակչության թվաքանակի:

ՀՀ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակը ընդունված է համարել ՀՀ-ի ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) 2011թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ վիճակագրական տեղեկագրում բերված տվյալները: Համաձայն 2011թ.-ի ՀՀ ԱՎԾ վիճակագրական տեղեկագրի՝ Էջմիածին համայնքում բնակչության թվաքանակը կազմել է 56974 մարդ: Ելնելով նշված թվաքանակից և ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքներից (Աղ.4), Էջմիածին համայնքում աղտոտիչների ֆոնային կոնցենտրացիաների արժեքները գնահատվում են հետևյալ տիրույթում. *փոշու մասնիկներ՝ 0,4 մգ/մ<sup>3</sup>, ածխածնի մոնօքսիդ՝ 1,5 մգ/մ<sup>3</sup>, ազոտի երկօքսիդ՝ 0,03 մգ/մ<sup>3</sup> և ծծմբի երկօքսիդ՝ 0,05 մգ/մ<sup>3</sup>*: Նշված մակարդակները չեն գերազանցում ՀՀ ազգային նորմերը (ՀՀ կառավարության որոշում 160-Ն, 2006 թ.), բացառությամբ է կազմում ընդհանուր փոշու մասնիկները, որոնց ֆոնային կոնցենտրացիան մոտ 2.6 անգամ գերազանցում է գործող ՍԹԿ (ՍԹԿ<sub>փոշի</sub>=0,15 մգ/մ<sup>3</sup>):

**Աղ. 4** *Մթնոլորտն աղտոտող որոշ նյութերի ֆոնային կոնցենտրացիաները՝ հաշվարկված ըստ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակի (2011թ.-ի մարդահամար):*

Բնակչության քանակը (հազ.)	Նյութերի ֆոնային կոնցենտրացիաները, (մգ/մ <sup>3</sup> )			
	Ընդհանուր փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 -125	0,4	0,05	0,03	1,5
10 - 50	0,3	0,05	0,015	0,8
< 10	0,2	0,02	0,008	0,4

### 6.9 Հողային ռեսուրսները և հողօգտագործումը

Կառուցապատվող տարածքը հանդիսանում է «Վաղարշապատ բժշկական կենտրոն» ՊՓԲ-ի անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված գույքը /Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 2116971 վկայականը/: Հողամասը գտնվում է բնակավայրերի հասարակական կառուցապատման գոտում, հողամասի օգտագործման նպատակը՝ հիվանդանոցի կառուցման և սպասարկման համար է:

Կառուցապատվող տարածքում ձեռնարկատիրական որևէ գործունեություն չի իրականացվում և հողատարածքը ամբողջությամբ օգտագործվում է բժշկական կենտրոնի կողմից:

ԲԿ-ի վերակառուցումը հողային աշխատանքներ չի ներառում, քանի որ նախագծված մասնաշենքերը կառուցվելու են քանդվող շինությունների տարածքներում: Բնութագրվող տարածքն ազատ երթևեկելի գոտիներում ներկայացված է ասֆալտապատ ծածկույթով, որը գտնվում է կիսաքանդ և քայքայված վիճակում, որոշ հատվածներում նկատելի են նաև ինքնաբերաբար աճած բուսականություն և կանաչ գոտիների տեսքով:

## 6.10 Ջրային ռեսուրսներ

Հիդրոերկրաբանական տեսակետից, բնութագրվող տեղանքն աղքատ է գրունտային ջրերով, որոնք ԲԿ-ի տեղամասի երկրաբանական ուսումնասիրությունների ընթացում չեն հայտնաբերվել և ըստ գրական տվյալների գտնվում են 12-45 մ խորություններում: Վերակառուցվող ԲԿ-ի տարածքին հարակից այլ մակերևութային ջրային մարմիններ չկան:

## 6.11 Բուսական աշխարհ

Բնութագրվող տարածքը գտնվում է զարգացած համայնքային միջավայրում և կառուցապատված տարածքներում, ուստի տեղանքում չկան վայրի բնության որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիները՝ տարածքի և հարակից վայրերի յուրացված և ուրբանացված լինելու պատճառով:

Բնութագրվող տարածքում առկա են կանաչ գոտիներ, որտեղ աճում են տարբեր տարիքի ծառատեսակներ և թփեր: Կանաչ գոտիների ոռոգումն իրականացվում է ավանդական եղանակով, այն է՝ բժշկական կենտրոնի տեխնիկական աշխատակազմի ուժերով:

Տարածքում գոյություն ունեցող կանաչապատ տարածքների մակերեսը կազմում է 2104.9 քմ: Վերակառուցման նախագծի շրջանակներում նոր կանաչապատ տարածքների ընդհանուր մակերեսը կդառնա 2217.9 քմ: Կանաչապատման աշխատանքների շրջանակում նախատեսվում է 113 քմ մակերեսով տարածքում սիզամարգերի իրականացում, որտեղ կցանվեն նաև ծաղիկներ:

## 6.12 Սոցիալ-տնտեսական վիճակ

Վաղարշապատ՝ (առավել հայտնի է Էջմիածին անվանումով), քաղաք **Հայաստանի Արմավիրի մարզում**: Հայաստանի քաղաքներից մեծությամբ չորրորդն է: Այժմ քաղաքը զբաղեցնում է 4424,82 հա հողատարածք, ունի 57 503 բնակիչ: Տնային տնտեսությունների թիվը՝ 18927 է: Վաղարշապատն ունի գլխավոր ճանապարհ դեպի մայրաքաղաք **Երևան**, որին միացված է գյուղերով: Վաղարշապատից դեպի Երևան մայրուղին 16-17 կմ է:

Էջմիածինը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի մեծ քաղաքներից մեկն է՝ Հայաստանի տարածքում մեծությամբ 4-րդ քաղաքն է: Էջմիածնում կան 7 վանքային համալիրներ, որոնք կառուցվել են 4-10-րդ դարերում, սակայն գործում են 5

եկեղեցի, որոնցից մեկը՝ Էջմիածնի Մայր Տաճարը Հայաստանի գլխավոր եկեղեցին է և գտնվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համալիրի մեջ, որը Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր և վարչական կենտրոնն է:

**Էջմիածնում առկա հոգևոր կառույցներ** - Մայր Տաճարը (301-303թթ.), Սբ. Հռիփսիմե վանք (618թ.), Գայանե վանք (630թ.), Սբ. Շողակաթ (1694թ.) եկեղեցին, Սբ. Մարիամ Աստվածածին եկեղեցի (1767թ.), Զվարթնոց տաճար (652թ.), Սբ. Մարիանե եկեղեցի (330-340թթ.):

2007թվականից Էջմիածինը պատմամշակութային իր հարուստ ժառանգությամբ (201 պատմամշակութային հուշարձան) ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Համաշխարհային ժառանգություն քաղաքներ» կազմակերպության անդամ է:

Համայնքում բնականոն զարգանում են տուրիզմը, առևտուրը, գյուղմթերքների վերամշակում և պահածոյագործությունը, ոգելիչ խմիչքների արտադրությունը, խաղողագործությունը, պտղաբուծությունը, բանջարաբուծությունը, սերմնաբուծությունը, անասնապահությունը և թռչնաբուծությունը: Համայնքում զգալիորեն բարելավվել է գյուղատնտեսության վիճակը: Իրականացվում է պտղատու և հատապտղատու բույսերի բազմացում, հացահատիկային մշակաբույսերի ցանք, կարտոֆիլի և բանջարանոցային մշակաբույսերի ցանք: Ցանքատարածությունների աճին զուգընթաց նվազել է հացահատիկի և հատիկաընդեղենի բերքը, իսկ կարտոֆիլի, բանջարեղենի, պտղի և հատապտղի, խաղողի բերքը աճել է: Համայնքի հողօգտագործողներին, որպես աջակցություն ՀՀ Կառավարության համապատասխան որոշումներով զարնանը և աշնանը հատկացվել է ազոտական պարարտանյութ և դիզելային վառելիք: 2016թ կարկտահարության և հեղեղումների հետևանքով 30-100 %-ով վնասվել են համայնքի գյուղատնտեսությամբ զբաղվող անձանց հողատարածքների վրա աճեցված մշակաբույսերը: Վերջին տարիների ընթացքում քաղաքում աճ է գրանցվել մշակող արդյունաբերության, էլեկտրաէներգիայի արտադրության, ջրամատակարարման ոլորտներում:

Էջմիածնում արրտադրական ձեռնարկություններ -«Էջմիածնի սարքաշինական գործարան» ԲԲԸ, «Ռեզիստ» ԲԲԸ, «Ռաստր» ԲԲԸ, «Էջմիածին հաց» ԲԲԸ, - «Պլասմասա», «Գրանիտ», «Հայքար», «Կարին», «Էջմիածնի սարքաշինական գործարան» ԲԲԸ, Էլեկտրոն գործարան, «Էջմիածին կաթ» ՍՊԸ, «Իմպերիալ տուր» ՍՊԸ, «Շին. իրերի և կահույքի պատրաստման ֆաբրիկա», «Էջմիածին գինու գործարան», «Կոնսեր» ՍՊԸ, Էջմիածնի պահածոների գործարան: Այժմ այդ ձեռնարկություններն



իրականացնում են լայն սպառման ապրանքների և կենցաղային իրերի արտադրություն՝ աշխատում են ոչ լրիվ հզորությամբ:

Ներկայացնելով էջմիածին քաղաքի ռեսուրսային ներուժը, կարելի է ասել, որ այստեղ զբոսաշրջության զարգացման հիմնական ուղղությունը հանդիսանում է պատմամշակութային զբոսաշրջությունը, որի ընթացքում զբոսաշրջիկին հնարավորություն է ընձեռվում ծանոթանալու էջմիածնի քաղաքային կյանքին՝ մշակութային և հոգևոր ժառանգությանը, տեսարժան վայրերին, ազգային առանձնահատկություններին, յուրահատուկ ազգային խոհանոցին և այլն:

## 7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Վաղարշապատի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները և հնարավոր ռիսկերը գնահատվում են նոր հիվանդանոցային մասնաշենքի կառուցման, մասնաշենքի վերակառուցման և ապամոնտաժման աշխատանքների ընթացքում, մասնավորապես՝ գնահատվում են անօրգանական փոշու և այլ ծխագազերի արտանետումներ և աղմուկի մակարդակի աճ շին-գործողությունների ընթացքում, սակայն նշված ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն տեղայնացված՝ հիմնականում ընդգրկելով ներկայացվող գործունեության տարածքը, ինչպես նաև հաշվի առնելով նախատեսվող շինարարական աշխատանքների ծավալը՝ ըստ աստիճանի և ինտենսիվության շրջակա միջավայրի վրա բոլոր բացասական ազդեցությունները և ռիսկերը կլինեն մինիմալ և կառավարելի:

### 7.1 Շինարարության փուլ

#### 7.1.1 Օդային ավազանի աղտոտվածություն և մեղմացման միջոցառումները

Վերակառուցվող Վաղարշապատի ԲԿ-ի մասնաշենքերի և օժանդակ կառույցների ապամոնտաժման և այնուհետև վերակառուցման գործողությունները կառաջացնեն անօրգանական փոշու արտանետումներ: Հաշվի առնելով ներկայացվող գործունեության ընթացքում հիմնական փոշու արտանետումներ առաջացնող աշխատանքների (ապամոնտաժում, հողային հանույթի բեռնման և թափոնակույտման աշխատանքներ)

փոքր ծավալները անօրգանական փոշու արտանետումների հաշվարկներ սույն հաշվետվությունում չեն ներկայացվում:

Շինարարական մեքենա-սարքավորումների շահագործման ընթացքում գնահատվում են նաև դիզելային վառելիքի այրմամբ պայմանավորված այլ վնասակար ծխագազերի արտանետումներ, սակայն նշված արտանետումները շին-հրապարակի սահմաններից դուրս չեն գերազանցի ՀՀ գործող ՍԹԿ-ները՝ հաշվի առնելով իրականացվող շին-աշխատանքների ծավալը և տևողությունը:

Թույլատրելի նորմերի սահմաններում ներկայացված վնասակար նյութերի արտանետումների կառավարումը և դրանց հնարավոր վնասակար ազդեցությունները կբացատրվեն և/կամ կնվազեցվեն շինարարական հրապարակում պարբերաբար իրականացնելով շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումների ծրագիրը (Աղ . 6), մասնավորապես՝ փոշենստեցման նպատակով նախատեսվում է ջրցանի գործողություններ, որոնց հաշվարկային ծավալները բերվում են 6.1.3 ենթագլխում: Բացի այդ փոշի առաջացնող նյութերը (ավազ, խիճ և այլն) շինարարական հրապարակում կպահվեն պաստառներով ծածկված վիճակում, ինչպես նաև վերջիններիս տեղափոխումը նույնպես կիրականցվի բեռնատարերի ծածկված թափքերի պայմաններում: Աշխատանքների ընթացքում պատշաճ մակարդակով կվերահսկվի նաև մեքենա-սարքավորումների տեխնիկական վիճակը:

Մթնոլորտային օդի պահպանությանն ուղղված բնապահպանական միջոցառումների համալիր ցանկը բերվում է *Աղյուսակ 6. -ում* (5.1 ենթագլուխ, Մթնոլորտային օդի աղտոտում և կառավարում):

### ***7.1.2 Աղմուկի և թրթռումների ազդեցություն և մեղմացում***

Շինարարական աշխատանքների ընթացքում աղմուկի մակարդակի գերազանցումներ ՀՀ-ում սահմանված նորմերից չի կանխատեսվում, քանի որ շինարարական աշխատանքներում օգտագործվող մեքենա-սարքավորումները կշահագործվեն բացառապես աղմկակլանիչների և խլացուցիչների առկայության դեպքում: Բացի այդ հիմնական աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն միայն օրվա ցերեկային ժամերին, այն է՝ ժամը 9:00-ից 18:00:

Շինարարական գործողությունների ընթացքում առաջացող հնարավոր թրթռումների դեպքում ազդեցություններ հարևան ազդակակիքների վրա չեն գնահատվում՝ հաշվի առնելով հարևան ազդակակիքների հեռավորությունը վերակառուցվող ԲԿ-ի տարածքից ( $\geq 50$ մ): Շինարարական աշխատանքների ընթացքում շինարար կապալառուն պարատավոր է հետևել ՀՀ թրթռումների գործող նորմերը, քանի որ ծրագրի շրջանակում հարակից կառույցների վրա հասցրված ցանկացած ֆիզիկական վնասը կվերացվի շինարար կապալառուի կողմից՝ սեփական միջոցների հաշվին:

Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումներն առավել մանրամասն ներկայացված են *Աղյուսակ 6.-ում* (5.2 ենթագլուխ, Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարում):

### **7.1.3 Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն**

Ա) Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինաշխատանքների կազմակերպման նպատակով, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար: Շինարարական աշխատանքներում և բանավորական կազմի խմելու-կենցաղային նպատակների համար անհրաժեշտ ջուրը կվերցրվի բնութագրվող տարածքին կից անցնող համայնքային ջրագծից:

Մասնաշենքերի ապամոնտաժման և վերակառուցման աշխատանքների ընթացքում առաջացած հնարավոր փոշու մակարդակները կնվազեցվեն ջրցանի իրականացմամբ:

Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսի հաշվարկը բերվում է ստորև.

$$V = S \times K \times T$$

որտեղ՝

S – ջրցանվող շինարարական տարածքի մակերեսն է՝ (7 067– 2 238) ք. մ= 9 305ք. մ

K – 1 մ<sup>2</sup> օրական ջրցանի նորմատիվն է՝ 0.0015 մ<sup>3</sup>,

T – ամբողջ շինարարության ժամանակահատվածն է (օրերով)՝ 22 օր x 30 ամիս=660

$$V = 9\ 305 \times 0.0015 \times 660 = 9\ 211 \text{ մ}^3/\text{շինարարություն ժամանակ}$$

Շին աշխատանքների ընթացքում ջրցանի համար անհրաժեշտ ջրի քանակը կկազմի 9 211 մ<sup>3</sup>:

Շինարարական աշխատանքների ընթացքում հոսքաջրերի առաջացում չի կանխատեսվում, բացի այդ աշխատանքները կատարվելու են ցանկապատված

շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները տարածքից: Այլ անուղղակի ազդեցություններ ջրային համակարգերի վրա չեն կանխատեսվում, քանի որ շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ՝ բացառելով շին-մեքենաների երթևեկության ընթացքում հնարավոր արտանետումները:

Հնարավոր կեղտաջրերի առաջացման դեպքում հրապարակում կպահվի կեղտաջրերի հեռացման համար նախատեսված տարա, որտեղ կեղտաջրերի (բետոնաջրեր և այլն) հետերոզեն զանգվածի նստեցումից հետո, վերջիններս հնարավոր կլինի շին աղբի հետ հեռացնել աղբավայր, իսկ դեկանտված ջուրը՝ հնարավոր կլինի օգտագործել ջրցանման նպատակով կամ շինարարական այլ աշխատանքներում: Կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումներն առավել մանրամասն ներկայացված են *Աղյուսակ 6. -ում* (5.3 ենթագլուխ, 6. գլուխ):

#### ***7.1.4 Թափոնների առաջացում և կառավարում***

Ա) Գործունեության ընթացքում կգոյանա շուրջ 3000 խ.մ շինարարական աղբ, որից 2700 խ.մ աղբը կառաջանա ապամոնտաժման աշխատանքներից: Վերջինս գնահատվում է երկրորդային օգտագործման համար ոչ պիտանի և ինքնաթափերով կտեղափոխվի և կթափոնակույտվի 3 կմ հեռավորության վրա գտնվող Էջմիածնի համայնքային աղբավայրում: Մնացած 300խ.մ շին աղբը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում:

Շինարարական աղբի կուտակումը կարող է հանգեցնել հողային համակարգի արտաքին շերտի աղբոտվածության: Նշված ազդեցություններից խուսափելու համար շինաղբը ժամանակավոր կուտակվելու է շինհրապարակում կանոնավոր կույտերի տեսքով՝ հատուկ հատկացված տեղերում, այնուհետև պարբերաբար տեղափոխվելու և պահվելու է Էջմիածին համայնքից 3 կմ հեռավորության վրա գտնվող համայնքային աղբավայրում:

Շին աշխատանքների ընթացքում առաջացած երկրորդային օգտագործման համար պիտանի նյութերը (հիմնականում մետաղի ջարդոններ և փայտանյութ) կտեսակավորվեն և կպահվեն հրապարակում նախատեսված վայրերում՝ շինարարի կողմից հետագա օգտագործման նպատակով:

Գործունեության ընթացքում կենցաղային աղբը հավաքելու նպատակով կտեղադրվեն աղբամաններ, որտեղից աղբը կանոնավոր կերպով կհեռացվի հանրային աղբամաններ:

Բ) Շինարարական աշխատանքների ընթացքում վտանգավոր թափոնների առաջացում չի կանխատեսվում: Աշխատանքների ընթացքում քսայուղերը, հեղուկ վառելիքը կպահվեն փակ տարաներով և անթափանց հիմքերի վրա (բետոնե, մետաղական կամ ավազե), ինչը կբացառի հողային շերտի հնարավոր աղտոտումը: Շինաշխատանքների ավարտից հետո նշված նյութերի մնացորդային քանակները որպես երկրորդային նյութ կօգտագործվեն շինարար կապալառուի կողմից այլ աշխատանքներում:

Շինարարական մեքենաների վառելիքի լիցքավորումը և քսայուղման գործողությունները կիրականացվեն մասնագիտացված կենտրոններում, որպեսզի բացառվի հրապարակում նյութերի արտահոսքերով պայմանավորված հնարավոր ռիսկերը: Թափոնների կառավարման միջոցառումների ցանկը բերված է *Աղյուսակ 6.-ում* (6. գլուխ, Թափոնների կառավարման պլան):

### **7.1.5 Հողային համակարգերի վրա ազդեցություն և մեղմացման միջոցառումներ**

Ներկայացվող գործունեության ընթացքում ուղղակի ազդեցություն տարածքում առկա բուսահողի (առկա է կանաչ գոտիներում) վրա չի գնահատվում, քանի որ շինաշխատանքներն իրականացվելու են արդեն իսկ գոյություն ունեցող մասնաշենքերի և օժանդակ կառույցների տարածքներում:

Շինարարական աշխատանքների ընթացքում կբացառվեն կանաչ գոտիների հատվածում առկա բուսահողի վրա այլ անուղղակի ազդեցությունները, ինչպիսիք են՝ շինաղբի տեղադրում կամ կեղտաջրերի հեռացում և այլն:

Բուսահողի պահպանման միջոցառումները նկարարագրված են բնապահպանական միջոցառումների ծրագրում *Աղյուսակ 6. -ում* (5.3 ենթագլուխ, Բուսականության կառավարման պլան):

Ինչպես վերը նշվեց, հրապարակում քսայուղերը և հեղուկ վառելիքի տարաները կպահվեն հատուկ անթափանց հիմքերի վրա, ինչը կբացառի վերջիններիս արտահոսքով պայմանավորված հողային համակարգերի հնարավոր աղտոտումը: Նախատեսվող

գործունեության ընթացքում մեքենա-սարքավորումների լիզքավորումը, քսայուղերի փոխումը կամ նմանատիպ այլ գործողությունները հիմնականում կիրականացվեն մասնագիտացված կենտրոններում, որպեսզի հնարավորինս բացառվի շրջակա միջավայրի վրա ազդեցությանները և հնարավոր ռիսկերը: Նշված ռիսկերի կառավարման միջոցառումները մանրամասն ներկայացված են *Աղյուսակ 6.-ում* (5 և 6 գլուխներ, Թափոնների կառավարում և արտակարգ իրավիճակների կառավարում):

### ***7.1.6 Ազդեցություն բուսական աշխարհի վրա և մեղմացման միջոցառումներ***

Ինչպես նշվեց ներկայացվող գործունեության շրջանակում նախատեսվում է գոյություն ունեցող մասնաշենքերի վերակառուցման աշխատանքներ, ուստի ներկայացվող գործունեությունը չի ունենա որևէ ուղղակի ազդեցություն տարածքում առկա բուսականության վրա: Շինարարության ընթացքում բուսականության պահպանության միջոցառումները մանրամասն նկարագրված են *Աղյուսակ 6.-ում* ներկայացված բնապահպանական միջոցառումների ծրագրում (5.3 ենթագլուխ, Բուսականության պահպանության և կառավարման պլան): Վերակառուցման նախագծի շրջանակներում նոր կանաչապատ տարածքների ընդհանուր մակերեսը կդառնա 2217.9 քմ: Կանաչապատման աշխատանքների շրջանակում նախատեսվում է 113 քմ մակերեսով տարածքում սիզամարգերի իրականացում, որտեղ կցանվեն և կտնկվեն նաև ծաղիկներ: Տարածքի կանաչապատման աշխատանքների շրջանակում նախատեսվում է նաև ամբողջ հողամասի մակերեսով բազմամյա խոտաբույսերի ցանում և ծաղիկների տնկման աշխատանքներ: Աշխատանքների կազմակերպման համար նախատեսվում է նաև 40 իւմ լրացուցիչ բուսահողի բերում:

### ***7.1.7 Սոցիալական ազդեցությունները և մեղմացումը***

Գործունեության ընթացքում հնարավոր սոցիալական ազդեցությունները մեղմացնելու նպատակով աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն սահմանափակ ժամերի՝ 9:00-ից 18:00: Կվերահսկվեն շինարարական մեքենաների տեխնիկական վիճակը, որպեսզի դրանք ապահովված լինեն աղմկակլանիչներով, ժամանակին կվերացվեն սարքավորումների անսարքությունները կամ անսարք վիճակում գտնվողները կփոխարինվեն նորերով:

Հնարավոր սոցիալական ազդեցությունները շին-հրապարակում կբացատրվեն նաև աշխատանքի և առողջության անվտանգության ապահովման միջոցառումների իրականացմամբ, որոնք մանրամասն նկարագրված են *Աղյուսակ 6.-ում* (1 ենթագլուխ, Աշխատանքի և առողջության ապահովման պլան), մասնավորապես՝ կիրականցվի հրապարակի ցանկապատում, կողմնակի անձանց մուտքը արգելող նշանների տեղադրում, հրապարակում աշխատող բանվորական կազմին կտրամադրվեն անվտանգության միջոցներ, կապահովվեն խմելու ջրի և հանգստի կազմակերպման պայմանները:

### ***7.1.8. Երթևեկության վրա ազդեցություն և մեղմացման միջոցառումները***

Գործունեության ընթացքում կանխատեսվում են շինարարական մեքենա-սարքավորումների շարժով պայմանավորված երթևեկության ծանրաբեռնվածություններ: Նշված ազդեցությունները կմեղմացվեն շինարարական մեքենա-սարքավորումների տեղաշարժը կազմակերպելով շարասյուններով, սահմանափակ արագությամբ ( $\leq 30$  կմ/ժ), ինչպես նաև մեքենաների իրար հաջորդող տեղաշարժը կկազմակերպվի նվազագույնը 30 րոպե ինտերվալով: Նշված ազդեցությունների մեղմացմանն ուղղված միջոցառումներն առավել մանրամասն ներկայացված են *Աղյուսակ 6.-ում* (4. գլուխ, Երթևեկության և մոտեցման ճանապարհների կառավարում):

### ***7.1.9. Հնարավոր արտակարգ իրավիճակները և մեղմացման միջոցառումները***

Շինարարական աշխատանքների ընթացքում կանխատեսվում են հետևյալ ռիսկերը.

- հրդեհի առաջացում
- հեղուկ նյութերի արտահոսք
- աշխատողների վնասվածքներ
- շահագործվող տեխնիկայի հետ վթարներ

Հնարավոր արտակարգ իրավիճակներից խուսափելու նպատակով պարբերաբար շինարարական տեղամասում կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

- Մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները՝ այդ թվում նաև վարորդները, հրահանգավորվելու են ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, ինչը պատշաճ եղանակով գրանցվելու է անվտանգության վարման գրանցամատյանում:

- Շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվելու են հրդեհաշիջման առաջնային միջոցներով, առաջին բուժօգնության դեղատուփով, իսկ

աշխատողներն անցնելու են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում/պատրաստվածություն:

- Բանվորական և ղեկավար կազմը ապահովվելու է սեզոնային արտահագուստով, անվտանգության սաղավարտով և այլ պաշտպանիչ միջոցներով:

- Հեղուկ նյութերը և քսայուղերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- Շինարարական մեքենաների վառելիքի լիցքավորումը և քսայուղերի հետ առնչվող բոլոր գործողությունները կիրականացվեն հատուկ մասնագիտացված կենտրոններում:

- Հնարավոր վնասվածքների, պատահարների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի համայնքի բժշկական հաստատությունը:

- Շինարարական հարթակում կապահովվի արտակարգ իրավիճակների վարման մատյան, որը շինարար կապալառուն պարտավոր կլինի պատշաճ մակարդակով վարել:

- Շինարարական հրապարակում կապահովվեն արտակարգ իրավիճակների մասին պատմող և արձագանքման քայլերը լուսաբանող պաստառներ/պլակատներ:

Նշված միջոցառումների պատշաճ մակարդակով ապահովման դեպքում, հնարավոր կլինի նվազագույնի հասցնել արտակարգ իրավիճակների ռիսկերը, իսկ առաջացման դեպքում հնարավոր կլինի ձեռնարկել արագ և արդյունավետ հակազդման միջոցառումներ:

## 7.2. Շահագործման փուլ

Վերակառուցված Էջմիածնի բժշկական կենտրոնի շահագործման փուլում շրջակա միջավայրի վրա գնահատվում են հետևյալ ազդեցությունները.

- Բժշկական *վտանգավոր թափոնների առաջացում*, որոնց կառավարում ինչպես և նախկինում կիրառործվի Էջմիածին բժշկական կենտրոնի կողմից ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված սանիտարական կանոնների և նորմերի համաձայն, մասնավորապես՝ վտանգավոր թափոնները կհավաքվեն և կպահվեն փակ պոլիէթիլենային տոպրակներով հատուկ թափոնների համար նախատեսված սենյակներում, իսկ այնուհետև ԲԿ-ն պայմանագրային հիմունքներով կհանձնի այն ընկերությանը, որը իրականացնում է բժշկական թափոնների



վնասագերծում և ոչնչացում: Այդ աշխատանքներն իրականացվում են Էջմիածին քաղաքում գործող «Էկոլոգիա ՎԿՀ» բժշկական թափոնների ոչնչացման գործարանի կողմից:

– Ջեռուցման շրջանում կաթսայատան շահագործմամբ պայմանավորված արտանետումներ (ածխածնի և ազոտի օքսիդներ): Արտանետվող աղտոտիչների կոնցենտրացիաները մթնոլորտի գետնամերձ շերտում արագ ցրման հետևանքով չեն գերազանցի գործող ՄԹԿ-ները, բացի այդ ժամանակակից նոր կաթսաների տեղադրումը ևս կնպաստի ջեռուցման շրջանում արտանետումների քանակի զգալի կրճատմանը:

## 8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

### 8.1. Բնապահպանական ազդեցությունները մեղմացնող միջոցառումները

Ներկայացվող գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին կապահովվի բժշկական կենտրոնի վերակառուցման բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն և շահագործում) բնապահպանական միջոցառումների ծրագրի (ԲՄԾ) ակտիվ և արդյունավետ իրականացմամբ, որի շրջանակում նախատեսվող միջոցառումները մանրամասն ներկայացված են Աղյուսակ. 6-ում: ԲՄԾ-ի պատշաճ մակարդակով իրականացումը կկանխարգելի և/կամ կնվազեցնի գործունեության ընթացքում կանխատեսվող անցանկալի բացասական ազդեցությունները շրջակա միջավայրի վրա:

ԲՄԾ-ն որպես անբաժանելի մաս կցվելու է հիմնական շինարար կապալառուի մրցութային և պայմանագրային փաստաթղթերին: Հիմնական շինարար կապալառուն պատասխանատու է լինելու ԲՄԾ-ի իրականացման համար:

Ստորև ամփոփ բերվում են նախատեսվող գործունեությունից ակնկալվող բացասական ազդեցությունները մեղմացնող և/կամ բացառող *հիմնական* բնապահպանական, աշխատանքի և առողջության ապահովմանն ուղղված միջոցառումները.

- տեղեկատվության հրապարակում և հանրային լսումներ
- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում
- շինարական աղբի կանանոնավոր հեռացում և պահում համայնքային աղբավայրում
- հրապարակում կտեղադրվեն կենցաղային թափոնների համար նախատեսված աղբամաններ և այնուհետև դրանք կհեռացվեն հասարակական աղբաման

- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում ՀՀ թույլատրելի նորմերի սահմանում
- շինարարական մեքենաների տեղաշարժը կիրականացվի սահմանափակ՝ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ
- աղմուկ առաջացնող աշխատանքներն կիրականացվեն թույլատրելի մակարդակների սահմանում և օրվա ցերեկային ժամերին՝ 9.00-18:00
- շինարարական նյութերի ձեռք բերումը կիրականացվի լիցենզավորված մատակարարից
- վառելիքի և նավթանման նյութերի պահումը կիրականացվի բետոնե/մետաղական կամ ավազե հիմքերի վրա
- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների ընթացակարգերը և կոնտակտային տվյալները պաստառների ձևով կփակցրվեն հրապարակում
- կիրականացվեն աշխատանքի և առողջության անվտանգության ապահովման միջոցառումները, ներառյալ՝ բանվորական կազմը կապահովվի սեզոնային արտահագուստով և անվտանգության սաղավարտներով, դիմակներով և այլն
- մեքենաների վառելիքի լիցքավորումը, քսայուղերի փոխարինումը կկազմակերպվի շինհրապարակից դուրս և մասնագիտացված կենտրոններում
- տարածքում կիրականացվեն հետշինարարական բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

Ենթաձրագրի շրջանակում իրականացվող հիմնական բնապահպանական միջոցառումների գումարային արժեքը (առանց հարկերի) հաշվարկվում է 3 222.0 հազ. ՀՀ դրամ (*Աղյուսակ 5*): Նշված արժեքը ներառում է նախագծման փուլում՝ տեղեկատվության հրապարակման և հանրային ծանուցման, բնապահպանական փորձաքննության համար նախատեսվող ծախսերը, շինարարության փուլում՝ շինարարական աղբի հեռացման, բուսահողի բերման, ինչպես նաև կանաչապատման աշխատանքները: Նշված միջոցառումների ծախսերը հաշվի են առնված նախագծի ծավալաթերթերում: ԲՄԾ-ում ներկայացված մնացած միջոցառումները շինարար կապալառուն կիրականացնի ենթաձրագրի շրջանակում նախատեսվող օժանդակ ծախսերի գումարից:

**Աղ5** Մեղմացնող միջոցառումների ուղիղ (հարկերը հաշվի չեն առնված) արժեքները:

Մեղմացնող միջոցառումը	Միավորը	Ծավալը/ Ցուցանիշը	Գումարային արժեքը, հազ. ՀՀ դրամ	Ժամանակացույցը
-----------------------	---------	-------------------	---------------------------------	----------------

հանրային ծանուցում	հատ	2	10	նախագծման փուլ
բնապահպանական փորձաքննություն	-	-	15	նախագծման փուլ
շին ադրի տեղափոխում	ի.մ	2 760	2917.0	շինարարության փուլ
բուսահողի բերում (ներառյալ բարձման, փոման և հարթեցման աշխ.)	ի.մ	40	80.0	շինարարության փուլ
Միզանարգերի ստեղծում (ներառյալ ցանման աշխատանքներ)	կգ	5	200.0	շինարարության փուլ/բարեկարգման աշխատանքներ
<b>Ընդամենը՝ հազ. ՀՀ դրամ</b>				<b>3 222.0</b>

## 8.2. Մոնիտորինգ

Ծրագրի պատվիրատուն կանոնավոր մոնիտորինգ է իրականացնելու, որպեսզի վերահսկի ԲՄԾ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը: Մշակված մոնիտորինգի պլանը ներկայացվում է *Հավելված 2*-ում:

Միջոցառումների իրականացման ամենօրյա վերահսկողությունը կիրականացվի տեխնիկական վերահսկման խորհրդատուի կողմից: Տեխնիկական վերահսկողները հսկելու են նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը և ժամանակին տեղեկացնելու են ՔԿ-ին նկատված անհամապատասխանությունների մասին:

**Աղ. 6 Բնապահպանական միջոցառումների ծրագիր**

*Հավելված 1*

<b>Մեղմացնող միջոցառումներ</b>			
<b>Ծրագրի գործողություններ</b>	<b>Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ</b>	<b>Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ</b>	<b>Պատասխանատու մարմին</b>
<b>ՆԱԽԱԳԾՄԱՆ ՓՈՒԼ</b>			
1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և փորձաքննություն	Գործունեությունը կարող է ունենալ բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա և ըստ ՀՀ ՇՄԱԳ օրենքի պահանջում է բնապահպանական պետական փորձաքննություն իրականացում և դրական եղրակացության ձեռք բերում:	– Մշակել ԲԿ-ի վերակառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը և դիմել ՀՀ ՇՄՆ պետական փորձաքննության և համապատասխան եզրակացություն ստանալու համար:	«ՄԱՌԱ ԵՎ ԴՌԻՍՏՐԵՐ» ՍՊԸ
2. Հանրային լուսներ և հանրության իրազեկում	Հանրության ոչ պատշաճ տեղեկացվածությունը և հնարավոր բողոքները կարող են ազդել ԲԿ-ի վերակառուցման Ծրագրի իրականացման ժամկետների վրա:	– ԲԿ-ի վերակառուցման նախագծի և շրջակա միջավայրի վրա ազդեցության առաջին հանրային քննարկումը իրականացվել է Թալինի բժշկական կենտրոնի շենքում (Քոթանյան 10 հասցեում) սույն թվականի փետրվարի 12:00-ին: Հանրային քննարկման մասին հայտարարությունը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ 25/01/2020 համարում: – Երկրորդ հանրային քննարկումը տեղի կունենա Շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության շրջանակներում:	«ՄԱՌԱ ԵՎ ԴՌԻՍՏՐԵՐ» ՍՊԸ

<b>ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՒԼ (ԱՊԱՄՈՆՏԱԺՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ)</b>			
<b>1. Առողջության և աշխատանքային անվտանգության պլան</b>			
<p>3. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները</p>	<p>– ԲԿ-ի վերակառուցման ծրագրի բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման:</p> <p>– Շին առարկաների ոչ ճիշտ դասավորվածությունը և շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպումը կարող են առաջացնել աշխատանքի և առողջության անվտանգության խնդիրներ:</p>	<p>– Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/ աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում:</p> <p>– Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար. ցանկապատում, պահակակետեր, ցուցանակներ, արգելող պաստառներ այլ:</p> <p>– Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակի բոլոր մեքենաներում և հատվածներում:</p> <p>– Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժօգնության դեղատուփի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակում:</p> <p>– Բանվորական և այլ անձնակազմը պետք է ապահովվի սեզոնային արտահագուստով և այլ անձնական պաշտպանիչ սարքավորումով:</p> <p>– Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել և հաշվետվության ձևով ներկայացնել ՔԿ-ին:</p> <p>– Աշխատողներին անհրաժեշտ է տրամադրել կոնկրետ աշխատանքի անվտանգության հրահանգավորում՝ աշխատանքը սկսելուց առաջ: Հրահանգավորման իրադարձությունը պատշաճ պետք է գրանցել գրանցամատյանում:</p> <p>– Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>
<b>2. Շրջակա միջավայրի պահպանության պլան</b>			
<p>5. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները. պամոնտաժման աշխատանքներ, շինանյութերի և շինաղբի</p>	<p>– Փոշու և այլ ծխագազերի արտանետումներ՝ տրանսպորտային միջոցների երթևեկությունից, ինչպես նաև շին տեխնիկայի շահագործման հետևանքով:</p>	<p><b>5.1. Մթնոլորտային օդի աղտոտման և փոշու կառավարում</b></p> <p>- Անհրաժեշտ է շինհրապարակում պարբերաբար իրականացնել <b>շրջանման և փոշենստեցման միձոցառումներ</b>:</p>	<p>Կապալառու</p>

<p>փոխադրումներ, և այլն:</p> <p>– Աղմուկի և թրթռումների մակարդակի աճ շին աշխատանքների ընթացում:</p> <p>– տարածքում առկա բուսականության վրա ազդեցություն</p> <p>– կանաչ գոտիների սահմանում առկա բուսահողի վրա ազդեցություն</p>	<p>– Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և պահել <b>պատասանելով ծածկված</b> վիճակում՝ փոշու հնարավոր տարածումը բացառելու համար:</p> <p>– Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների <b>արագությունը (≤30 կմ/ժ) փոշու</b> և այլ ծխազագերի քանակը նվազեցնելու նպատակով:</p> <p>– Անհրաժեշտ է պարբերաբար ստուգել մեքենասարքավորումների տեխնիկական վիճակը:</p> <p><b>5.2. Աղմուկի և թրթռումների կառավարում</b></p> <p>– Շին հրապարակում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներին:</p> <p>– Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողությունների ընթացքում մեքենաների և սարքավորումների կայաներուց զգայուն ազդակալիչների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը:</p> <p>– Աղմուկ առաջացնող գործողություններն անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին՝ <b>9:00-18:00:</b></p> <p>– Բոլոր մեքենա-սարքավորումները պետք է ապահովված լինեն համապատասխան <b>խլացուցիչներով:</b></p> <p>– Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը, իսկ մեքենաների կամ իլլացուցիչների անսարքիության դեպքում տվյալ մեքենան անհրաժեշտ է դուրս բերել շինհրապարակից:</p> <p>– Անհրաժեշտ է խուսափել թրթռումներ առաջացնող աշխատանքներ կատարելուց, նման աշխատանքների անհրաժեշտության դեպքում խստորեն իրականացնել ցերեկային ժամերին և հետևել ՀՀ թույլատրելի նորմերի մակարդակներում:</p> <p>– Անհրաժեշտ է ապահովել բոլոր բանվորներին համապատասխան ԱՊՄ-րով, այդ թվում՝ ակնազակալներով:</p> <p><b>5.3. Բուսականության պահպանություն և կառավարում</b></p> <p>– Անհրաժեշտ է տարածքում առկա բուսականությունը պաշտպանել շին գործողություններից, թափոնների տեղադրումից, փոշու ազդեցությունից և հնարավոր այլ ազդեցություններից:</p> <p>– Անհրաժեշտ է ըստ անհրաժեշտության</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>
---	--	---

		<p>իրականացնել ազդեցության ենթարկվող բուսականության <b>պաստառապատում, ջրցանում փոշու</b> ազդեցությունները նվազեցնելու նպատակով:</p> <ul style="list-style-type: none"> <li>- Անհրաժեշտ է ապահովել տարածքում առկա բուսականության <b>ռոտման միջոցառումներ</b>:</li> <li>- Անհրաժեշտ է խուսափել տարածքում ծառերի և թփերի հատումից:</li> <li>- Շինաշխատանքների ընթացքում հնարավորինս բացառել տարածքում առկա բուսահողի վրա ազդեցությունները (շինթափոստների և կեղտաջրերի տարածում):</li> <li>- Անհրաժեշտ է հրապարակում պահել <b>կեղտաջրերի հեռացման համար նախատեսված տարա</b>, հետերոգեն զանգվածի նստեցումից հետո, վերջիններս շին աղբի հետ հեռացնել աղբավայր, իսկ դեկանտված ջուրը օգտագործել ջրցանման նպատակով կամ շինարարական այլ աշխատանքներում:</li> </ul>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>
<b>3. Շինարարական հրապարակի կազմակերպման պլան</b>			
<p>7. Շին հրապարակի կազմակերպում:</p>	<p>Շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպումից բխող ազդեցություններ, ազդակիր կառույցների և սպասարկվող անձնակազմի վրա:</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Շին հրապարակը անհրաժեշտ է կազմակերպել բացառապես վերակառուցվող ԲԿ-ի տարածքի ներսում բացառելով այլ ազակակիր տարածքների օգտագործումը առանց համապատասխան թույլտվության:</li> <li>- Անհրաժեշտ է կազմակերպել շին հրապարակը հրապարակի կազմակերպման սխեմային համաձայն՝ ապահովելով <b>օտարվող մասնաշենքի մուտքը և ելքը</b>:</li> <li>- Անհրաժեշտ է իրականացնել ժամանակավոր <b>անթափանցելի ցանկապատում</b> ողջ շին-հրապարակի պարագծով:</li> <li>- Անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակի ծրագրի ցուցանակի ու մուտքն արգելող նշանների տեղադրում:</li> <li>- Շինհրապարակի տարածքը պետք է պահել մաքուր և կարգավորված, իրականացնել շինհրապարակի և մոտեցնող ճանապարհների <b>ամենօրյա մաքրում՝ ցեխի և փոշու տարածումը</b> կանխելու նպատակով:</li> </ul>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>
<b>4. Երթևեկության և մոտեցման ճանապարհների կառավարման պլան</b>			

<p><b>8.</b> Շինհրապարակ մուտք և ելք գործող մեքենաներ</p>	<ul style="list-style-type: none"> <li>- երթևեկության խափանումներ</li> <li>- երթևեկության հետ կապված վտանգներ և անվտանգության խնդիրներ</li> <li>- փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակի աճ</li> <li>- հասարակական ճանապարհների վրա ցեխի և շին աղբի տարածում</li> <li>- շինարարական ծանր սարքավորումների և փոխադրամիջոցների կողմից ճանապարհների վնասի պատճառում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Մեքենաների և բեռնատարների երթևեկությունն անհրաժեշտ է կազմակերպել հասարակական երթևեկությանը և հիմնական հանրային ճանապարհներին նվազագույն անհարմարություններ և վնաս պատճառելու սկզբունքով:</li> <li>- Մեքենաների և բեռնատարների երթևեկությունը և մոտեցումն անհրաժեշտ է կազմակերպել բացառապես շին հրապարակ մուտքի և ելքի համար նախատեսված ճանապարհով:</li> <li>- Անհրաժեշտ է խուսափել գործողություններից, որոնք կարող են ճանապարհների խցանումների պատճառ դառնալ:</li> <li>- Անհրաժեշտ է ապահովել <b>բեռնատարների ծածկով երթևեկումը</b> շինհրապարակը լքելիս:</li> <li>- Անհրաժեշտ է ապահովել, որպեսզի փոխադրամիջոցները սարքավորված լինեն աղմուկի <b>արդյունավետ կլանիչներով և խլացուցիչներով:</b></li> <li>- Անհրաժեշտ է իրականացնել փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր զննում՝ վառելանյութի և յուղի հոսքը կանխելու համար:</li> <li>- Անհրաժեշտ է դադարեցնել <b>արտահոսքեր ունեցող մեքենաների աշխատանքը</b> և փոխարինել պատշաճ վիճակի մեքենաներով:</li> <li>- Նախքան շինհրապարակից հեռանալն անհրաժեշտ է ապահովել <b>անվտանգ ելք մաքրելու միջոցներով</b> (աշխատանքային տեղամասում <b>կուպձային մակերևույթների</b> և փոխադրամիջոցների <b>լվացման միջոցներ</b> համապատասխան արտահոսքը կանխարգելման համակարգով) շինարարական աղբն ու ցեխի տարածումը կանխելու համար:</li> </ul>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>
<p><b>5. Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան</b></p>			
<p><b>9.</b> Վտանգավոր նյութերի օգտագործում և այլ արտակարգ իրավիճակներ, դժբախտ պատահարներ և այլն</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին հրապարակում;</li> <li>- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը;</li> <li>- Անհրաժեշտ է իրականացնել նյութերի անվտանգության տվյալների թերթիկների, արտակարգ իրավիճակների արձագանքման քայլերի մասին տեղեկացնող</li> </ul>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>



		<p>պաստառների/պլակատների տեղադրում;</p> <ul style="list-style-type: none"> <li>- Արտահոսքը մաքրող գործիքները պետք է ճիշտ ձևով պահեստավորել, որպեսզի անհրաժեշտության դեպքում դրանք հեշտությամբ օգտագործվեն, ինչպես նաև աշխատող անձնակազմը պետք է տեղեկացված լինի դրանց ճիշտ գործածության մասին;</li> <li>- Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար;</li> <li>- Վտանգավոր նյութերի կառավարումը պետք է իրականացնել ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան;</li> <li>- Քիմիական և այլ, վտանգավոր նյութերն ու վառելանյութն պետք է օգտագործել միայն անհրաժեշտության դեպքում: Դրանք անհրաժեշտ է պահել ծածկված, ապահով և բնական ճանապարհով օդափոխվող տարածքում, որն ապահովված է անանցանելի/անթափանց հատակով և պատնեշով;</li> <li>- Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը;</li> <li>- Արտակարգ պատահարի դեպքում անմիջապես անհրաժեշտ է տեղեկացնել ՔԿ-ին հաշվետվության ձևով:</li> </ul>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>
<b>6. Թափոնների և նյութերի կառավարման պլան</b>			
<p><b>10.</b> Շինարարական աշխատանքներ և շինարարական աշխատանքներ</p>	<p>- Շին աղբի տեղադրումը անհամապատասխան վայրերում, ջրահեռացման համակարգ, բուսահող ներթափանցող թափոնները և աղտոտիչները և շինարարական այն նյութերը, որոնք պոտենցիալ վտանգ են ներկայացնում շրջակա միջավայրին:</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Անհրաժեշտ է շինարարական աղբը հեռացնել բացառապես տեղական իշխանության կողմից հատկացված վայրում, այն է 3 կմ հեռավորության վրա գտնվող <b>Թափոնի համայնքային աղբավայր:</b></li> <li>- Կանոնավոր կերպով (ամենաուշը 2 օրը մեկ) շինարարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարական թափոններն ու աղբը փոշին և շին աղբի երկարատև կուտակումը և երթևեկության խոչընդոտները կանխելու համար:</li> <li>- Անհրաժեշտ է դասակարգել աղտոտված հողը, աղբն ու շինարարական մյուս թափոններն ըստ տեսակների՝ պինդ, հեղուկ և վտանգավոր:</li> <li>- Աղտոտված հողը, անհրաժեշտ է տեղադրել աղբի համար թույլատրված վայրերում:</li> <li>- Շին հրապարակի տարածքի սահմաններում</li> </ul>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>

		<p>անհրաժեշտ է հատկացնել շին աղբի նախնական կուտակման վայր:</p> <ul style="list-style-type: none"> <li>- Հրապարակում նախատեսել կենցաղային աղբի հավաքման համար նախատեսված աղբաման, իսկ այնուհետև հավաքված աղբը հեռացնել հասարակական աղբաման:</li> <li>- Անհրաժեշտ է բացառել շինանյութերի և աղբի կուտակումը շինարարակից դուրս՝ մասնավոր կամ հասարակական տարածքում, ինչպես նաև տարածքին կից տեղադրված հասարակական աղբամանների օգտագործումը՝ շին թափոնների հեռացման նպատակով:</li> <li>- Անհրաժեշտ է հրապարակում պահել <b>կեղտաջրերի (բետոնաջուր, և այլն)</b> հեռացման համար նախատեսված տարա, որտեղ նստվածքի մեխանիկական նստեցումից հետո ջուրը կարելի է կլինել օգտագործել ջրցանման նպատակով կամ ջրի գոլորշացումից հետո նստվածքը/չոր մնացորդը հեռացնել աղբավայր:</li> <li>- Հեղուկ վառելիքի կամ յուղանման նյութերի տարաները անհրաժեշտ է պահել <b>անթափանց հիմքերի (բետոնե, մետաղական) կամ ավազե հիմքի</b> վրա՝ հողային շերտի վրա հնարավոր արտահոսքերը կառավարելու նպատակով</li> </ul>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>
<b>7. Աշխատանքային տեղամասի վերականգնման և բարեկարգման պլան</b>			
<p><b>11.</b> Շինարարակի Վերականգնումը, ՔԿ-ի տարածքի բարեկարգում/կանաչապատում</p>	<p>- Անհրաժեշտ է շինարարակից հեռացնել շինարարական նյութերը թափոնները և շին պարագաները:</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Շինարարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատումը և այլն:</li> <li>- Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները:</li> <li>- Անհրաժեշտ է մաքրել շինարարակը կենցաղային և այլ աղբից և հեռացնել յուրի, վառելիքի արտահոսքի հետքերը:</li> <li>- Անհրաժեշտ է իրականացնել ՔԿ-ի կողմից մշակված ընդունման- հանձնման ակտի ստուգաթերթիկի բոլոր պահանջները:</li> <li>- Անհրաժեշտ է կատարել բարեկարգման աշխատանքները՝ համաձայն նախագծի բարեկարգման և կանաչապատման պլանի համաձայն:</li> </ul>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>
<b>ՀՆՏ ՇԻՆԱՐԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ</b>			
<p><b>12.</b> Թերությունների վերացման աշխատանքներ</p>	<p>Շինարարական փուլի համար սահմանված բոլոր ազդեցությունները</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Անհրաժեշտ է ապահովել տնկված կանաչ զանգվածի 90% կաչողականությունը և աճը: Հակառակ դեպքում անհրաժեշտ է վերատնկել և փոխարինել բոլոր վնասված կամ անառողջ բուսատեսակները:</li> </ul>	<p>Կապալառու/ Հիվանդանոցի տնօրինություն</p>

<p><b>13.</b> Բուսականության Վերականգնում</p>	<p>Բուսականությունը չի աճում սպասվածին համաձայն</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Անհրաժեշտ է ներառել Ծրագրի համար նախատեսված բուսականությունը ԲԿ-ի կանաչապատ տարածքների սպասարկման պլանում:</li> <li>- Անհրաժեշտ է իրականացնել կանաչապատված տարածքի աճի և վիճակի մշտադիտարկումներ:</li> <li>- Սահմանված կարգով թափոնների ժամանակավոր կուտակում պահեստներում</li> <li>- բժշկական թափոնների վնասագերծում և ոչնչացում էջմիածին քաղաքում գործող «Էկոլոգիա ՎԿՀ» բժշկական թափոնների ոչնչացման գործարանի կողմից:</li> </ul>	<p>Հիվանդանոցի տնօրինություն</p>
<p><b>14.</b> Բժշկական թափոնների պատշաճ կառավարում</p>	<p>Թափոնները կարող են ունենալ շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր ազդեցություններ</p>		

**8.3. Հավելված 2. Բնապահպանական մեղմացնող միջոցառումների մոնիտորինգի պլան**

Մոնիտորինգ						
Վայրը/ Գործողությունը/ Փուլը	Մոնիտորինգի ենթակա պարամետրեր	Մոնիտորի նգի կետեր	Մոնիտորի նգի գործիքներ/ մեթոդներ	Բնապահպանական գործողությունների ցուցանիշ	Պ ատասխա նատուներ	Մոնիտորինգի հաճախականություն
<b>ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒՎ</b>						
1. Աշխատանք ունենալու հնարավորություններ	Աշխատուժը համալրված է տեղացի բնակիչներից, կանանցից և ցածր որակավորում ունեցող աշխատողներից	Շինարարական տեղամաս	Փաստաթղթերի ստուգում այդ թվում կապալառուի կողմից աշխատատեղեր, նախատեսված են տեղաբնակ աշխատողների, ցածր որակավորում ունեցողների և կանանց համար	Կապալառուի կողմից աշխատանքի ընդունված տեղաբնակ աշխատողների, ցածր որակավորում ունեցողների և կանանց թիվը	ՔԿ ՎԽ	Կսահմանվի Կապալառուի կողմից աշխատուժի համալրման պլանի մեջ դիտարկել շինարարական գործողությունների մոբիլիզացիոն փուլում
2. Հանրային լուսմներ և կապը հանրության հետ	Հանրության տեղեկացվածությունը շինարարության փուլերի վերաբերյալ Ազդակիր կողմերի տեղեկացվածությունն Օրագրի վերաբերյալ	Շինարարական տեղամաս	Փաստաթղթերի ստուգումներ: Շինարարական տեղամասերի ստուգայցեր Հանրային լուսմներ Բողոքների գրանցամատյանի ստուգումներ	Բողոքներին/առաջարկու թյունները հասցեագրվել են բոլոր պահանջվող ընթացակարգերին համապատասխան	ՔԿ	Հանրային լուսմները՝ շին աշխատանքները սկսելուց առաջ: Բողոքների մոնիտորինգ կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
3. Տարածքի մաքրում բուսականությունից	Տարածքի մաքրումը բուսականությունից համապատասխանում է ԲՄՕ-ին Շինհրապարակի մերձակայքի բուսականությունը	Շինարարական տեղամաս	Տարածքի բուսականությունից մաքրմանը վերաբերվող փաստաթղթերի ստուգում Շին. հրապարակի	Հատված թփերի գրանցամատյանը առկա է	ՔԿ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան

	պաշտպանված է		ստուգայցեր			
4. Շրջակա միջավայրի պահպանություն	Նստվածքների առաջացում Փոշու և այլ օդի աղտոտիչների արտանետումներ Աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացում	Շին տեղամաս և շինհրապարակից 50 մ հեռավորության վրա գտնվող փոշու, աղմուկի, թրթռումների զգայուն ընկալիչներ	Ակնադիտական ստուգումներ շինհրապարակի ստուգայցերի միջոցով; Բողոքների գրանցամատյանի գրառումների ստուգում; Փոշու, աղմուկի, թրթռումների մակարդակների գործիքային ստուգում և վերլուծություն բողոքների առկայության դեպքում:	Գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը; Փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակը գտնվում է ՀՀ գործող նորմերի սահմաններում;	ՔԿ ՎԽ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
5. Շին աղբի և թափոնների տեղադրման վայրեր	Շին աղբի և թափոնների տեղադրման գտնվելու վայրը, հատակագիծը և կառավարումը:	Շին աղբի և թափոնների տեղադրման վայրի հարևանությամբ բնակչությանը պատճառված անհարմարություններ:	Փաստաթղթերի ստուգում; Շին աղբի և թափոնների տեղադրման վայրերի ստուգայցեր	Շին աղբի և թափոնների տեղադրման վայրը և հատակագիծը համապատասխանում են պետ մարմինների կողմից թույլատրվածին և Տարածքի կառավարման պլանին: Գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը	ՔԿ ՎԽ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
6. Երթևեկության և մոտեցման ուղիների կառավարումը	Երթուղիների և մոտեցման ուղիների գտնվելու վայրերը; ԲԿ-ի և հարևան բնակչությանը պատճառվող անհարմարությունները և անվտանգության հարցերը Ճանապարհների և այլ կառույցներին հատկապես ջրահեռացման համակարգերին պատճառվող վնասներ:	Ճանապարհների օգտագործում, սարքավորումներ ի և Նյութերի տեղափոխության համար; Շինհրապարակի մոտեցման մուտքերը	Փաստաթղթերի ստուգում Շինհրապարակ կատարած ստուգայցեր	Երթևեկության և մոտեցման ուղիների համապատասխանությունը Պլանի մասնագրերին: Գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը	ՔԿ ՎԽ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան

7. Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում	Վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր	Շինարարական տեղամաս	Փաստաթղթերի ստուգում Շինհրապարակ կատարած ստուգայցեր	Պատահարների դեպքում պատահարների հաշվետվության ձևի վարում: Պատահարները կառավարվում են Արտակարգ իրավիճակների պլանին համապատասխան:	ՔԿ ՎԽ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
8. Թափոնների և շին. նյութերի կառավարում	Շինարարական թափոնների և նյութերի կառավարումը շինարարության ընթացքում	Շինարարական տեղամաս	Փաստաթղթերի ստուգում; Շինհրապարակ, հանքեր, թափոնավայրեր կատարած ստուգայցեր:	Շին աղբը, կենցաղային աղբը և ոչ պիտանի և ավելցուկային նյութերի քանակները կառավարվում են Պլանին և հրահանգներին համապատասխան և տեղադրվում են միայն թույլատրված վայրում: Թափոնների գրանցամատյանը մշակված է և պատշաճ վարվում է:		
9. Շինհրապարակի վերականգնում, կանաչապատում և տարածքի բարեկարգում	Շինհրապարակը մաքրված է, նույնիսկ և թափոնները հեռացված են: Բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են: Շինհրապարակի տարածքը բարեկարգված է:	Շինարարական տեղամաս	Շինհրապարակի վերա-կանգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլանն առկա է: Բոլոր մակերեսները այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են մինչև սկզբնական վիճակը:	Ամբողջ շին աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացված են շինհրապարակից: Թփերի վերատնկման վայրը և քանակը համապատասխանում են նախագծի կանաչապատման պլանին: Ապահովված է թփերի 90% կայտղականությունը:	ՔԿ ՎԽ	
<b>ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ (ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ) ՓՈՒՎ</b>						
11. Տարածքի բարեկարգում	Թփերի և այլ բուսականության նորմալ աճ	Կանաչապատման բոլոր տեղամասերը	Ստուգայցեր	Թփերի և խոտածածկույթի սանիտարական վիճակի ստուգումներ	ՔԿ ԲԿ-ի տնօրինություն	

---

## 9. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Ներկայացվող գործունեության վերաբերյալ առաջին հանրային քննարկումն իրականացվել է ս.թ. փետրվարի 11-ին՝ ժամը 12:00-ին Վաղարշապատի համայնքապետարանի շենքում: Հանրային քննարկման մասին հայտարարությունը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2020թ.-ի հունվարի 25-ի համարում հանրային ծանուցման գործող ընթացակարգին համաձայն այն է՝ քննարկումն անցկացնելու օրվանից առնվազն 7 աշխատանքային օր առաջ: Հանրային քննարկման մասին հայտարարությունը և նախագծային փաստաթղթերը տեղադրվել են Էջմիածնի համայնքապետարանի պաշտոնական կայքում, ինչպես նաև քննարկման մասին հայտարարությունը փակցրվել է համայնքի և բժշկական կենտրոնի տեղեկատվական տախտակների վրա:

Հանրային քննարկմանը ներկա են գտնվել բոլոր շահագրգիռ և ազդակակիր կողմերը, ներառյալ ներկայացուցիչներ վերակառուցվող ԲԿ-ի նախագծային ընկերությունից, բժշկական կենտրոնի աշխատակիցներ, ներկայացուցիչներ Արմավիրի մարզպետարանից և համայնքապետարանից և ՀՀ քաղաքաշինության կոմիտեից և այլ մասնակիցներ: Քննարկմանը ներկա մասնակիցների ցանկը քննարկման արձանագրությունը և տեսաձայնագրությունը կներկայացվեն փորձաքննության նախնական գնահատման հայտին կից:

## 10. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Շինարարական Կլիմայաբանություն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
2. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
3. ԱԴԲ 2015: Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
4. ՀՀ 2011թ.-ի մարդահամարի ցուցանիշները: ՀՀ Արմավիրի մարզի ցուցանիշները: URL: <http://armstat.am/am/?nid=509>
5. ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին:
6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք /ընդունված 2014թ./
7. Методические указания по расчету выбросов загрязняющих веществ в атмосферу с дымовыми газами отопительных и отопительно-производственных котельных. 1986, Москва.